Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 195 ՇԱԲԱԹ 25 ՕԳՈՍՏՈՍ 1884 (Ն. Տ.) 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 ԶԻԼԳԱՏԷ 1301

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2½ ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ:
Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել
«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Ղալաթիա, Նորատունկեան խան:
Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ
درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده {ارهولك}
غزته‌سى اداره‌سنه

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	համար	Տարեկան	դահեկան	արծաթ	200
»	»	Վեցամսեայ	»	»	100
»	»	Եռամսեայ	»	»	50
»	»	Հատով	»	»	1
Գաւառաց	համար	Տարեկան	»	»	240
»	»	Վեցամսեայ	»	»	120
»	»	Եռամսեայ	»	»	60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք		59
»	»	Վեցամսեայ	»		28

Դուրս ղրկուած լրագրաց համբու ծախքը խմբագրութեան վրայ է:

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ
ՇԱԲԱԹ 25 ՕԳՈՍՏՈՍ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԿԱԽ ԽՆԴԻՐՔ

Գոհունակութեամբ կը հաստատենք թէ շաբթուս մէջ քայլ մ'եւս առնուեցաւ ի մասին կարգադրման ազգային առկախ խնդրոց: Կ. Պոլիս բերել տրուած Առաջնորդաց մէկն արտօնութիւն ստացաւ պաշտօնատեղին վերադառնալու: Կարնոյ ցաւալի խնդիրը վերջնապէս փակուած է: Ո՛չ եւս արգելք մի կայ որ Գեր. Օրմանեան վարդապետ շարունակէ իր առաջնորդութեան պաշտօն ի Կարին, ուր կը վերադառնայ ի մօտոյ: Լուր կայ թէ շատ չանցած նմանօրինակ թոյլտուութիւն մը պիտի լինի նաեւ Մշոյ և Արաբկիրի Առաջնորդաց, և Գուլանըխի առաջնորդական փոխանորդին: Ուրախ ենք որ այսպէս իրականութիւն կը գտնէ այն յոյս զոր մեր վերջին Շաբաթական Տեսութեան մէջ կը յայտնէինք: Այս առաջնորդական խնդրոց կարգադրութեամբ, Բ. Դուռը նոր իրաւունք մը պիտի ստանայ գաւառացի ազգայնոց երախտագիտութեան:

Վարչութիւնը վերջին նիստերու մէջ զբաղեցաւ առաջնորդական խնդրովք: Տրապզոնի պէս կարեւոր վիճակ մը թափուր մնացած է Առաջնորդին մահուամբ: Վարչութիւնն ընտրելիներ ցոյց տուաւ: Տարակոյս չունինք այն ընտրութեան վրայ զոր պիտի կատարեն Տրապզոնի ողջամիտ ազգայինք: Եթէ կ'ուզեն Առաջնորդ ընտրել բանիբուն, գործունեայ, փորձեալ և ազգային առաջդիմութեան նախանձախնդիր եկեղեցական մը, անշուշտ Գեր. Իզմիրլեան Սրբազանին պիտի տան իրենց քուէն: Թէ՛ Տրապզոնցւոց և թէ՛ ընդհանուր Ազգին շահերը կը պահանջեն որ այսպիսի ձեռնհաս եկեղեցականներ պաշտօն վարեն գաւառական կարեւոր վայրերու մէջ: Երեսփոխանական և կրօնական ժողովներն և ազգային յանձնախմբեր օգտակարագոյն անդամէ մի կրնան զրկուիլ այսպէս, բայց յառաջ գալիք օգուտը կորուստէն շատ աւելի է ապահովապէս: Կը փափաքինք որ ուրիշ կարող եպիսկոպոսներ ու վարդապետներ, որք Կ. Պոլսոյ մէջ բաւական զբաղում չեն գտներ, գաւառական պաշտօններ ստանձնելով ցոյց տան գործունէութիւն և ազգօգուտ արդիւնք:

Վարչութիւն անխտիր կը մերժէ գաւառական Առաջնորդներու մատուցած հրաժարականներն: Այս նկատմամբ ընդհանրապէս իրաւունք ունի Վարչութիւնն: Առաջնորդական պաշտօններն անպատճառ անձնական հանգստեան միջոցներ չեն կրնար նկատուիլ: Գաւառական պաշտամունք և նոյն իսկ եկեղեցական վիճակի բնութիւնք կը պահանջէ որ Առաջնորդք երբեմն դժնդակ պարագայից դիմադրելու քաջութիւնն ունենան, և դժուարութեանց առջեւ չընկրկին: Շատ ծանր կոչում է նուիրել իր անձն Աստուծոյ, Եկեղեցւոյն և Ազգին: Ամեն մարդու տրուած ձիրք մը չէ այս: Բայց նոքա որք պատուեալ են այդ կոչմամբ, գիտնալ պարտին թէ աշխարհական պաշտօնեաներու չափ իրաւունք չունին անձնական հանգիստ և նիւթական շահու պայմաններ փնտռելու այն պաշտօններու մէջ զորս կը վարեն:

Բայց մատուցեալ առաջնորդական հրաժարականներու մէջ կար հատ մը, զոր Վարչութիւնը լաւ կ'ընէր եթէ ընդունէր, փոխանակ մերժելու: Կը խօսինք Ռոտոսդոյի Առաջնորդին հրաժարականին վրայ: Գեր. Ներսէս եպիսկոպոս բարի և ծերունի եկեղեցական մ'է. իբրեւ մարդ և իբրեւ եկեղեցական անոր դէմ ըսելիք չունինք: Բայց երբ իբրեւ Առաջնորդ կը հրաժարի պաշտօնէ մը, զոր գոհացուցիչ կերպիւ վարելու ո՛չ եւս կարող է իր ծերութեամբ և ֆիզիքական ու բարոյական տկարութեամբ, Ռոտոսդոյի պէս կարեւոր և բազմահոյ վիճակի մը շահուց լաւագոյն հասկացողութիւն մը կը պահանջէր ընդունիլ Ն. Գերապատուութեան հրաժարականն, և նմա յաջորդ նշանակել ժամանակիս ոգւոյն ու ընթացքին ըմբռնող աւելի գործունեայ եկեղեցական մը: Պատճառ ունինք կարծելու թէ Ռոտոսդոյի Առաջնորդը պիտի պնդէ իր հրաժարման վրայ, և յայնժամ չենք տարակուսիր թէ Վարչութեան ուշադրութենէն չպիտի վրիպի մեր այս դիտողութիւն:

* * *

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Գատը գիւղի և Բերայի թաղերուն ազգային կալուածոց վերաշինութեան լուրեր հրատարակեցինք շաբթուս մէջ: Վարչութիւնն և Տնտեսական խորհուրդ դը գոհունակութեամբ կը հաստատեն այս ուղղութեամբ տեսնուած առաջդիմութիւնն: Ազգային կալուածոց տնտեսական պայմաններու համաձայն վերաշինութիւնն ու բարւոք պահպանումն կարեւոր խնդիր մ'է: Փորձը ցոյց կուտայ թէ թաղերն և արուարձաններն ո՛րչափ կ'օգտուին ձեռնհաս և արժանաւոր Թաղային խորհրդականներ ընտրելով, որք կրնան ոսկւոյ վերածել ցայն վայր լքեալ կամ հրկիզեալ ազգային կալուածներն, և անոնց միջոցաւ հոգալ թաղային կենսական պէտքեր: Ուր որ լաւ Թաղական խորհուրդներ կան, կը տեսնենք թէ ո՛չ միայն կալուածներն, այլ և դպրոցները բարւոք և արդիւնաւոր վիճակ մը կը ստանան: Այս մասին Գատը գիւղ, Բերա և Օրթագիւղ կրնան գեղեցիկ օրինակ ընծայել ուրիշ թաղերու և գիւղերու:

Մասնաւոր ուշադրութեան արժանի է Բերայի կողմէ փորձուած նորաձեւութիւն մը, որ յաջող արդիւնք կը խոստանայ ըստ ամենայնի: Կ'ակնարկենք Բերա-Շիշլիի գերեզմանատան նորոգ յարդարումն, որով յուրաքանչիւր պատ մը պիտի քաշուի և որոյ մէջ բարեբախտներ ի գործ պիտի դրուին, կանոնաւորմամբ այն տրոց զորս ամեն ազգային կը վճարէ իր մեռելոց թաղման առթիւ: Այս տրոց կամ դրամական փոխարինութեանց համար սակագիներ սահմանուած են, այնպէս որ, մինչ աղքատ ազգայինք նոր բեռ մը չպիտի կրեն բնաւ, ունեւոր ազգայինք պիտի նպաստեն վայելուչ վիճակի մը մէջ դնելու ազգային գերեզմանատուն մը: Պէտք է գիտնալ թէ ազգի մը բարեկրթութեան յայտարար են այն խնամք զոր կը տանի մաքրութեան, բարեկարգութեան ու բարւոք պահպանութեան իր գերեզմանատանց: Ցաւօք և անկիրթ ժողովրդոց յատուկ է չյարգել իրենց հարց, մարց և նախնեաց յաւիտենական հանգստեան սրբավայրերը: Շիշլիի գերեզմանատունը, շնորհիւ նոր կարգադրութեան, որոյ վերաբերեալ պաշտօնագիրն արդէն հրատարակեցինք, պիտի լինի տիպար գերեզմանատուն մը, և կը յուսանք թէ մայրաքաղաքիս ուրիշ թաղերուն և արուարձաններուն մէջ նմանօրինակ խնամք պիտի տարուին ազգային գերեզմանատանց շրջափակման, կանոնաւորման ու զարդարման: Բարեպաշտութիւն ու բարեկրթութիւնն հաւասարապէս գրգիռ պէտք է լինին այս ուղղութեամբ առաջդիմութիւն մը գործել տալու մերայնոց: Այս մասին գոհունակութեամբ կը հաստատենք նաեւ այն ջանքեր զորս Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ քարոզիչ Գեր. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան վերջերս բրաւ Պաղլար Պաշըի ազգային մեծ գերեզմանատան խղճալի վիճակը բարւոքելու համար, յաջողապէս կարգադրելով այն վէճեր որք երկար ժամանակէ հետէ կային Յունաց և Հրէից հետ, և գերեզմանատան շրջափակման ու ներքին յարդարման համար ձեռնարկներ ընելով, որք կը յուսանք թէ նմանապէս յաջող արդիւնք կ'ունենան:

* * *

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ինչպէս արդէն գոհունակութեամբ հաստատեցինք, այս կարեւոր խնդիր գործնական երեւոյթ մը ստացած է: Հանգուանակից յանձնախմբին ծրագիրն այժմ Ուսումն. Խորհրդոյ առջեւ կը գտնուի, որ պաշտօն ունի քննել զայն և իր կարծիքն ըսել Քաղաքական ժողովոյ: Խորհուրդն իր ընթացքով ցոյց պիտի տայ թէ ո՛րչափ անկեղծապէս փափաքող է Ազգն օժտելու Կեդրոնական վարժարանով մը: Կասկածական անկարեւոր ու սին նկատումներ իրաց պէտք է թողուին, և ամենէն գործնական միջոցը պէտք է ընտրուի ապահովելու համար Կեդրոնական վարժարանի բացումն: Ուսումնական Խորհուրդը տեղի չունի վախնալու թէ իրմէ զատ ուրիշ մարմնոյ մի միջամտութեամբ ի գլուխ կ'ելնէ այս կարեւոր գործ. զի տարակոյս չկայ թէ Կեդր. վարժարանն որ Ուսումն. Խորհրդոյ օրով որ բացուի, մեծ պատիւ պիտի բերէ նոյն Խորհրդոյ, ինչպիսի արտաքին օժանդակութիւններ ալ աջակից եղած լինին գործիս յաջողման: Կը յուսանք թէ Ուսումն. Խորհուրդը շուտով կ'աւարտէ իր քննութիւն, և առաջիկայ շաբթու մէջ իսկ կը տրուի վերջնական որոշումն ի մասին բացման Կեդր. վարժարանի: Զայս կ'ակնկալէ բոլոր ազգն ալ, որ, ինչպէս քաջ գիտէ Ուսումն. Խորհուրդը, խորապէս զգացած է կրթական այսպիսի բարձրագոյն հաստատութեան մը պէտքն, և խնդիրն այլ եւս չերկարելու կարեւորութիւնը:

* * *

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Թէեւ եգիպտական խնդրոյ վրայ գրելու արգելքը կը շարունակէ, բայց աստ հրատարակեալ տեղեկութիւններէն իմացուած է թէ Լորտ Նորթպրուք և Լորտ Ուոլսլի այսօր իսկ կ'ելնեն յԵգիպտոս, ուր երկուքին կատարելիք կարեւոր պաշտօններն ըստ բաւականին ճշդուած են արդէն: Մի կողմէ երկրին անտեսական և վարչական վիճակը բարեփոխելու ձեռնարկ մի, միւս կողմէ Կորտոն զօրավարը փրկելու զինուորական ձեռնարկ մը Պ. Կլատսդոնի դահլիճին եգիպտական աշխարհավարութեան այժմեան միակ տարրերը կազմելուն պատճառաւ, խնդիրն իր ամբողջութեամբ չներկայեր նոր և ծանր երեւոյթ մը, զոր արժէ ծածկել մեր ընթերցողներէ: Կը կարծուի թէ նորէն արտօնութիւն պիտի տրուի տեղական մամլոյն՝ ըստ առաջնոյն չափաւորապէս խօսելու եգիպտական խնդրոյ վրայ: Բայց եթէ տեղական մամուլն արդէն ունենար զայս արտօնութիւն, ցարդ հրատարակուածներէն աւելի կարեւոր բան մի չպիտի ունենար գրելու:

Բ. Դրան այժմեան զբաղումներն են, այս եգիպտական խնդրոյ բանակցութիւններէն զատ, որք կը շարունակին Անգլիոյ հետ, ներքին բարեկարգութեան ինչ ինչ մասնաւոր խնդիրներ, յորս Հէճազի, Ալպանիոյ, Տէրսիմի և Սիւլէյմանիէի դէպքերն ալ բաժին մ'ունին: Այս վայրերու անհնազանդ ցեղերուն պարբերապէս պատճառած անկարգութիւնք ծանօթ են արդէն, և ինչ որ այժմ տեղի կ'ունենայ, սովորականէն շատ տարբեր բան մի լինել չթուիր: Օսմանեան զօրքերն, եթէ յարմար թուով և պատշաճ ժամանակին գործածուին, անտարակոյս կը բաւեն վճռական հարուած մը տալու արաբական, քրդական, ալպանիական և միրտիդական անհանդարտ տարրերաց: Հետեւապէս, այս կողմէ ծանր խնդիր մը չկայ որ միայն մտահոգութիւն մը ազդէ Բ. Դրան: Զարմանք միայն կրնան ազդել Թայմզի պէս լուրջ կարծուած թերթերու Ալպանիոյ, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ դէպքերուն վրայ Բ. Լէվէլ Բոլէ-Ֆոնտէնի տեղեկութեանց վրայ յենլով հրատարակած քննադատական կծու յօդուածներն, յորս կարելի չէ անկողմնակալութեան նշոյլն իսկ տեսնել օսմանեան տեսակէտով:

* * *

ԽՈԼԵՐԱ

Խոլերան Ֆրանսայի մէջ անհետանալու վրայ է, բայց սաստկապէս կը ճարակէ Իտալիոյ մէջ: Նաբոլիէ տրուած վերջին լուրեր կը ցուցնեն թէ Խոլերան ամեն օր բազմաթիւ զոհեր կ'ընէ այդ քաղաքի մէջ: Իտալիոյ ուրիշ շատ տեղեր ալ վարակեալ են: Կը գիտցուի որ Իտալիոյ ամենէն անմաքուր մասերը զոհ կ'երթան Խոլերայի, ինչպէս Թուլոնի և Մարսիլիոյ մէջ ամենէն անմաքուր թաղերը մեծագոյն կորուստ կ'ընէին: Փորձեալ ճշմարտութիւն մ'է թէ Խոլերան կը զօրանայ անմաքուր տեղեր: Կայսերական կառավարութիւնը գովելի հոգածութիւն մը կը տածէ այս մեծ Տէրութիւնը պաշտպանելու Խոլերայի վարակման մը դէմ: Տարակոյս չունինք թէ, շնորհիւ այս հոգածութեան, պիտի հասկցուի թէ միայն սահմանագլխոց վրայ և նաւահանգիստներու մէջ հաստատեալ Քարանթինաներ բաւական չեն կրնար համարուիլ զԿ. Պոլիս և Տէրութեան ուրիշ մասերը պաշտպանելու ընդդէմ խիզախ արշաւանաց այս սարսափելի թշնամւոյ, որ [illegible] յանկնկալս կը մտնէ յԻտալիա, որ Թուրքիայէն շատ աւելի խստութեամբ ի գործ կը դնէր Քարանթինաներ թէ՛ իր սահմանագլխոց վրայ, թէ՛ նաւահանգստաց մէջ և թէ՛ ծովեզերքէս հեռի կղզեաց առջեւ: Կը յիշուի թէ իտալական Քարանթինաներու խստութեան պատճառաւ վէճեր ծագեցան սահմանակից տէրութեանց, մանաւանդ Զուիցերիոյ հետ: Սպանիա ալ, թէեւ մեծ զգուշութեամբ կը գործադրէր Քարանթինայի կանոնները, վերջապէս չէ կրցած ազատիլ մահաբեր թշնամւոյն արշաւանքէն: Կարելի չէ գուշակել թէ Խոլերան ո՛րչափ ատեն պիտի շարունակէ կոտորածներ ընել Իտալիոյ մէջ. որովհետեւ մաքրութեան կողմէ Իտալիա Ֆրանսայէն շատ ետ կը մնայ, թէեւ ուրիշ երկիրներէ քիչ մ'աւելի մաքուր է: Մեր երկրի համար փրկութեան գլխաւոր միջոցն հանրային առողջապահութեան ընդարձակ և ազդու միջոցներու կիրառութեան մէջ է: Այս մասին թաղապետութիւնք ցարդ իրենց անկարողութեամբ փայլած են: Հազարաւոր մարդոց աչքին փուշ եղած աղտեղութեանց դէզեր կը վրիպին թաղապետական պաշտօնէից ուշադրութենէն: Բայց սիրելի է յուսալ թէ վտանգին մօտաւորութիւնն և ահարկու թշնամւոյ մը սպառնալիքը քիչ մ'ազդուութիւն պիտի ներշնչեն այս պաշտօնական մարմնոց, որոց ձեռքն է այսպիսի մեծ մայրաքաղաքի մը առողջային վիճակի ապահովութեան կենսական խնդիրը:

* * *

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(23)(

ՖՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ՄԱՏՆԷ

Ե.

— Այս մարդիկ առնուազն հարիւր հազար ֆրանքի հասոյթ ունին, ըսաւ ինքնիրեն Պ. տը Թէնշպրէ. երկու չոր գլուխ կանանց համար պէտք եղածէն շատ աւելի է: Կը մնայ գիտնալ թէ Օ'Սիւլիվանի ժառանգութեան խայծէն պիտի բռնուի՞ն:

Թա՛, այդ խայծէն միշտ կը բռնուին մարդիկ, թէեւ հարուստ լինին:

Միայն պէտք կը լինի ուժով բռնել գործն:

Եւ առանց երկար խորհելու՝ քաշեց զանգակը:

Կապոյտ զգեստով դռնապան մ'եկաւ բացաւ և այցելուն տարաւ առաջին յարկի դրան սանդուղին առջեւ, ուր սենեկապան ծառայ մ'անոր այցետոմսը խնդրեց:

— Տիկին Լըքոնթէն ճանչնալու պատիւը չունիմ, պատասխանեց լրտեսը, զոր անշուշտ կարելի չէր այնպէս կարծել: Հաճեցէք ըսել իրեն թէ ամենակարեւոր գործի մը վրայ խօսելու եկած եմ ... այնպիսի գործի մը՝ որ մանաւորապէս օրիորդ Լըքոնթի համար կարեւորութիւն ունի:

Սպասաւորը վայելչազարդ փոքրիկ դահլիճ մը մտցուց զայն և գնաց ղեկուցանել իր տիկնոջ:

Վայրկեան մը յետոյ դուռ մը բացուեցաւ և երիտասարդ մը ներս մտաւ, որոյ դէմքն իսկոյն Պ. Թօլպիաքի ուշադրութիւնը գրաւեց, և որ բաւական պաղ կերպիւ մ'ըսաւ.

— Դո՞ւք էք, պարո՛ն, որ տիկին Լըքոնթը տեսնել կ'ուզէք:

— Այո՛, պարոն:

— Տիկինն ինձ յանձնեց ընդունիլ ձեզ:

— Որո՞ւ հետ խօսելու պատիւն ունիմ:

— Իմ անունս չկրնար բան մը յայտնել ձեզ. միւս կողմէ, դուք ալ յարմար չդատեցիք ձեր անունն ըսել ինձ ... Հաճեցէք ուրեմն շատանալ գիտնալով թէ ամիս մը չանցած՝ փեսայ պիտի լինիմ տիկին Լըքոնթի:

Պ. տը Թէնշպրէ գլխով խոնարհութիւն ըրաւ առանց պատասխանելու այս նախաբանին, որ, պէտք է ըսել, հրապուրիչ չէր:

— Ա՛, փեսայ մը կայ եղեր, ըսաւ Պ. Թօլպիաք ինքնիրեն, պէտք է աճապարել, ապա թէ ոչ ...

— Հաճեցէք յայտնել ձեր այցելութեան նպատակը, պարո՛ն, յարեց երիտասարդը:

— Կը կրկնեմ ձեզ թէ տիկին Լըքոնթի ներկայիչն եմ ես, որովհետեւ անոր աղջիկը պիտի առնում:

Ուստի կրնամ անմիջապէս բանակցիլ այն կարեւոր գործին վրայ՝ որ ձեզ հոս բերած է ... մանաւանդ որ այդ գործն, կ'ըսէք ... ի մեծ զարմանս ինձ, մասնաւորապէս օրիորդ Լըքոնթի կը վերաբերի:

Մինչդեռ փեսայն այսպէս ցամաք կերպիւ կը խօսէր, լրտեսն անոր երեսը կը նայէր այնպիսի ուշադրութեամբ մը, որ անքաղաքավարութեան կը հասնէր, և այսպիսի անպատշաճութիւն մը գործելու համար Պ. Թօլպիաք ծանր պատճառներ պարտէր ունենալ, վասն զի սովորաբար իբրեւ բարեկիրթ մարդ կը վարուէր:

— Պարո՛ն, ըսաւ երիտասարդը բարկութեամբ, չեմ կարծեր որ իմ վրայ ծիծաղելու եկած լինիք հոս ... և սակայն ձեր վարմունքն այնպէս կը կարծեցնէ ... արդ՝ կը յայտարարեմ ձեզ թէ ոչ ոքին կը ներեմ անպատշաճօրէն վարուիլ, և ...

— Ներեցէք, պարո՛ն, ընդմիջեց Պ. տը Թէնշպրէ յոյժ քաղաքավար կերպիւ: Արդարեւ արժանացայ ձեր ինձ ուղղած քիչ մը խիստ խօսքերուն, և կ'աղաչեմ որ հաճիք ընդունիլ իմ չքմեղանքս:

Եթէ պատշաճից ներածէն աւելի ուշադրութեամբ ձեր երեսը նայելու համարձակեցայ, պատճառն այս է որ թուեցաւ ինձ թէ ձեզ տեղ մը տեսած լինելու պատիւն ունեցած եմ: Եւ իմ յիշողութիւնս քրքրելու զբաղելով կը մոռնայի պատասխանել ձեզ:

Ուստի կրնաք յիշողութիւնս ճշդել՝ եթէ պատիւ ընէք յայտնել թէ անկեց քանի մը տարի առաջ Անգլիա բնակա՞ծ էք:

— Կրթութեանս մէկ մասն հոն ըրած եմ, պարո՛ն. և որովհետեւ այդչափ հետաքրքիր էք իմ անձիս վերաբերեալ բաներն իմանալու, անունս է Լուի Լըքոք տը Ծանթիյի:

Եւ պատրաստ եմ ձեր հրամանին, երբ և ինչպէս հաճոյ թուի ձեզ. աւելցուց երիտասարդն այնպիսի արտասանութեամբ մը, որ բնաւ երկբայութիւն չէր թողուր նշանակութեանը վրայ:

Այցելուն չպատասխանեց այս խօսքին, ինչպէս որ կրնար սպասուիլ, և որ առաւել անհեթեթն է, տիկին Լըքոնթը տեսնելու համար ալ չպնդեց:

Թէպէտ և Պ. տը Թէնշպրէ ինքզինք կառավարելու մասին շատ վարպետ էր, բայց և այնպէս չէր կրցած ծածկել ո՛չ զարմանքն, ո՛չ ալ յուսախաբութիւնն երբոր Լըքոքի անունը լսած էր:

Բայց շուտով նուաճեց ինքզինք, և պաղ կերպիւ պատասխանեց.

— Կը տեսնեմ, պարո՛ն, որ կը սխալէի: Նմանութիւն մ'անշուշտ մոլորեցուցեր էր զիս, վասն զի ձեր անունը ... ձեր անունները կ'ուզեմ ըսել, բոլորովին անծանօթ են ինձ:

Կ'ուզէի տեսնել զտիկին Լըքոնթ. բայց նա չուզեր ընդունիլ զիս: Թերեւս յետոյ զղջայ. բայց, ինչ որ ալ լինի, մեկնելէ զատ ուրիշ գործ չմնար ինձ:

Եւ թեթեւապէս ողջունելով երիտասարդն որ չպատասխանեց անոր ողջունին, դուրս ելաւ:

Պ. Լըքոք չմնաց ետ դարձունել զայն, և Թօլպիաք գաւթին դրան մէջէն իր կառքը ցատկեց գոչելով կառավարին.

— Օրլէանի երկաթուղւոյն կայարա՛նը:

Լաւ կը տեսնուէր որ կառքը քաշող երիվարն իրենը չէր, վասն զի չէր խնայեր անոր:

Հազիւ կառքը ճամբայ ելաւ [illegible] գետափն [illegible] պողոտայէն բաժնող բազմաթիւ [illegible] անցնելու համար, Պ. Թօլպիաք մենախօսութիւն մ'սկսաւ, որուն իմաստը գուշակել բաւական դժուարին էր, թէ և մաքուր ֆրանսերէն կը խօսէր:

— Ի՛նչ պիծակներու բոյնի մը մէջ պիտի մտնէի, կ'ըսէր ակռաներուն մէջէն:

Այդ տղան ծերունի Լըքոքի որդին միայն կրնայ լինիլ, և պիտի ամուսնանայ ժառանգներէն միոյն ... կամ մանաւանդ միակ ժառանգին հետ ... վասն զի միւսն, ասոր մեռնելէն յետոյ միայն կրնայ ժառանգել:

Աստուծոյ, կարծես թէ սատանան կը մտնէ այս գործի մէջ:

Միւս կողմէ, աներկբայ եմ որ այս Լըքոքին երեսը տեսած եմ տեղ մը ... նմանապէս աներկբայ եմ որ հօրը հետ տեսած չեմ երբէք ... թէ և կեանքիս մէջ երեք անգամ խօսած չեմ անոր հետ ...:

Կը թուի ինձ նաեւ թէ տեսած ժամանակս աւելի երիտասարդ էր:

Ո՞ւր տեսայ արդեօք: Գուցէ Լոնտոնայի մէջ ... ինքն ըսաւ ինձ թէ իր կրթութեան մէկ մասն Անգլիոյ մէջ ըրած է:

Պէտք է որ ստուգեմ զայս ... վասն զի վերջապէս, եթէ հոն հանդիպած լինէր ինձ ...: Բայց ոչ ... ինքն ալ զիս պիտի ճանչէր, և իր նայուածքէն կը հասկցուէր թէ իմ դէմքս անծանօթ էր իրեն ... ճշմարիտ է որ այն ժամանակ մօրուօք էի ես ...:

Նա ալ մօրուօք է այժմ, և գուցէ Անգլիա եղած ժամանակ դեռ բուսած չէր:

Վերջապէս քանի մ'օրէն կը տեղեկանամ:

Հոս Պ. Թօլպիաքի դէմքն զգալապէս տխրեցաւ, և սկսաւ մռմռալ.

— Այո՛, պիտի իմանամ, բայց ժառանգորդին հետ ընելիք գործս չյաջողեցաւ: Լըքոքի ընտանեաց հետ խնամութիւն կնքելու վրայ եղող կանանց հետ բանակցելու միջո՞ցն: Եթէ իրաւախոհութիւն մ'առաջարկեմ, իրենց փեսացուին հետ կը խորհրդակցին, նա ալ հօրը կը հարցնէ, և այն հին չարաճճին ալ շուտով կը հասկնայ իմ խաղս:

Ուրիշ միջոց մը պէտք է գործածել ... այն ալ վտանգաւոր է, մանաւանդ այս միջոցիս: Բայց հոգ չէ ... իրիկուն մը կուգամ տանը շրջականներն աչքէ կ'անցունեմ. ո՛րչափ շուտով ընեմ՝ ա՛յնչափ լաւ կը լինի, վասն զի կորսնցնելու ժամանակ չունիմ:

Առ այժմ պէտք է զգուշութեան միջոցներ ձեռք առնում փեսին դէմ ... ուղեպանի մ'աղջկան դէմ, որ աւելի դիւրին կը թուի ինձ ...: Միայն թէ, ասոր հետ կարգադրութիւն մ'ընել կարելի չէ, որովհետեւ վեց տարու է:

Կ'երթամ նախ տեսնել թէ ինչ է հայրն, և ապա կ'որոշեմ գործելու եղանակս:

Այս երկար մենախօսութենէն յետոյ, Պ. Թօլպիաք կառքին մէկ անկիւնն կռթնեցաւ և այնուհետեւ զգուշացաւ բարձրաձայն խորհրդածելէ:

Արդարեւ, եթէ ապահովութեան պետը կարենար տեսնել և մանաւանդ լսել զայն՝ յորմէ հետէ բաժնուած էր Բրէթէօյէն Մատլէնի հրապարակին վրայ, բաւական պիտի զարմանար:

Վասն զի Թօլպիաք, որ կը պարծէր ամեն մ'առաջ գտնել Արպալէթ փողոցի կրկին ոճիրներուն հեղինակը, բոլորովին ուրիշ գործով մ'զբաղեալ էր:

(Շարունակելի)

Ո՞րն է այն խնդիր որու մէջ քաղաքականութիւնն իւր անհաճոյ դեր չխաղայ, պատճառելով թիւրիմացութիւններ և փոխադարձ հակառակութիւններ։ Քարանդինայի խնդրոյն յաւելից կայ քաղաքական խնդիր մը, որ ծագում առաւ Եգիպտական Դեսպանախորհրդոյ մէջ, երբ Գերմանիա առաջարկեց և Անգլիա չընդունեց որ Դեսպանախորհուրդն ինկատ առնու Քոլերայի դէմ Եգիպտոսի մէջ Սուէզի ջրանցքին բերանն ի գործ դնել հարկ եղած Քարանդինայի անօրինութիւններ։ Նոյն խնդիրն այժմ Բ. Դուռը ձեռք առած է, և կը յուսանք թէ առաւել յաջող և առաւել արդիւնաւոր ելք մը պիտի կրնայ տալ։ Էքսբրէս իմացած է թէ, Աւստրիոյ թելադրութեամբ, Բ. Դուռը ծանուցագիր մը ղրկեր է Տէրութեանց, խնդրելով որ խորհրդակցութիւն մը լինի վերակազմելու համար Քարանդինեան Սուէզի ջրանցքին բերանը։ Բ. Դուռը կը յայտնէ թէ Քոլերան միայն կերպիւ գոյութիւն ունի Հնդկաստանի մէջ, ուստից ապաքէն կ'առնու իւր ծագում (ճիշդ դիտողութիւն մը, որուն համեմատ լաւագոյն է հայերէն Հնդախտ գրել փոխանակ Քօլէրայի.) թէ այս պատճառաւ Օսմ. կայսերական կառավարութիւնը չարունակ մտահոգութեան մէջ է ո՛չ միայն Եգիպտոսի, այլ համայն Տէրութեան համար։ Ուստի, կ'եզրակացնէ խնդրելով որ Ջրանցին բերանը Քարանդինեան առաւել ազդեցիկ լինի, մինչ յայտնի է թէ Անգլիացիք անհաշտ թշնամի են Քարանդինայի դրութեան, և ինչպէս Անգլիոյ մէջ, նաև յԵգիպտոս կարեւորութիւն չեն տար Քարանդինայի միջոցներուն։ Սպասելով Տէրութեանց նպաստաւոր պատասխանին, Կ. Պոլսոյ Համազգային Առողջապահական խորհուրդն հաստատած է հինգ աւուր Քարանդինա Եգիպտոսէն եկող նաւուց վրայ։ Կը գուշակուի թէ Գերմանիա, Ռուսիա, Աւստրիա, Իտալիա և Ֆրանսա, որք Դեսպանախորհրդոյ մէջ պաշտպանեցին Միւնստեր կոմսին առաջարկն եգիպտական Քարանդինայի խնդրոյն վրայ, ըստ պիտի տան Բ Դրան այս առաջարկութեանց։ Տեսնենք թէ Անգլիա, որ պատրաստութիւն կը ցուցնէր եգիպտական Դեսպանախորհրդէն դուրս առանձինն քննելու զայս խնդիր, ի՞նչ դիրք պիտի բռնէ այժմ։

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴ ՄԸ. Զրոյց կայ թէ նոր Դեսպանախորհուրդ մը պիտի գումարի եւրոպական ինչ ինչ առկախ խնդրոց կարգադրման համար։ Այս զրոյց ծագում կ'առնու Քալնոքի կոմսին և Պիսմարք իշխանին խորհրդակցութիւններէն, որք ի Վարձին։ Գերմանիա պիտի ղրկէ հրաւիրագրերը։ Քննելի խնդիրք են. Նախ, Եգիպտական գործեր, առողջական և դրամական. երկրորդ, Գաղթային խնդիր, ի մասին մանաւանդ Քոնկոյի նոր Պետութեան. և երրորդ, Անիշխանականաց և այլ յեղափոխական տարրոց դէմ ձեռք առնուելիք համազգային միջոցներ։

ՕՏԷՍԱՅԻ ԴԷՊՔԸ. Ծանուցինք անցեալ օր թէ ամսոյս 8/20 ին Օտէսայի մէջ աղջիկ մը, Բալծուշինա անուն, փորձած է ռէվոլվէրով սպաննել ոստիկանապետ Բաղանոֆի գնդապետն, և չէ յաջողած։ Աղջիկը 18 տարեկան էր։ Ուզեց տեսակցիլ գնդապետին հետ։ Իրեն թոյլ տրուեցաւ մտնել ոստիկանապետին սենեակն, և 20 վայրկեան յետոյ ռէվոլվէրի ձայն մը լսուեցաւ սենեակէն. սպասաւորք ներս մտնելով տեսան որ Բաղանոֆի դեռ ծխաշունչ զէնք մը կը բռնէր, զոր կրցած էր կորզել աղջկան ձեռքէն։ Սա, քիչ մը ժամանակ խօսակցելէ յետոյ, գնդապետին երեսն ի վեր կրակ բրած էր, բայց գնդակն ոստիկանապետին ականջը քերելով անցած էր։ Սպանութեան փորձին շարժառիթ եղած է վրէժխնդրութիւնն, որովհետեւ քիչ ժամանակ առաջ Օր. Մարիա Բալծուշինայի եղբայրն, որ յեղափոխական մ'է, ցկեանս չղթայակապ աքսորութեան դատապարտուած էր։ Աղջկան սենեկին մէջ գտնուած թուղթերով ապացուցուեր է թէ ինք ալ յեղափոխական կուսակցութեան անդամ է։

ՄԻԱՑ. ՆԱՀԱՆԳԱՑ ԱԶԳ. ՊԱՐՏՔԸ. Միաց. Նահանգաց տոկոսաւոր պարտքն, որ երբեմն 2 երկիլիոն 381 միլիոն տոլարի կը հասնէր, 1 երկիլիոն 226 միլիոն տոլար է այժմ։ Գրեթէ կէսը վճարուած է 18 տարւոյ մէջ, և 20 րդ դարուն սկսելուն, ամբողջը վճարուած պիտի լինի անշուշտ։ Հարաւայնոց և Հիւսիսայնոց պատերազմէն յետոյ Եւրոպա կ'ըսէր թէ ամերիկեան ժողովրդին ինքզինք կառավարելու կարողութիւնն այս ահագին պարտուց վճարման համար բաւելիք ընթացքէն պիտի դատուի։ Եթէ այս տեսութիւն ճիշդ էր, աշխարհի լաւագոյն կառավարութիւնը պէտք է համարուի Միաց. Նահանգաց կառավարութիւնը։

ԻՏԱԼԻԱ. Թայմզին Վիեննայի թղթակիցը կը պատմէ խօսակցութիւն մը զոր օրս. Չէյին ունեցաւ տեղւոյն իտալական դեսպան Ռոպիլանդ կոմսին հետ։ Սա մեծ գովեստ տուեր է Իտալիոյ արտաքին գործոց այժմեան նախարար Պ. Մանչինիի, և ըսեր է թէ իրենք կատարելապէս համակարծիք են արտաքին աշխարհաքաղաքութեան վրայ։ Գաղթային խնդրոյն վրայ խօսելով, կոմսն ըսեր է. «Իտալիա չունի գաղթային բաղձանքներ, եւ իտալական գաղթականութիւնք տարբեր են ուրիշ գաղթականութիւններէ։ Իտալացիք երկրի մը մէջ գաղթականութիւն կը հաստատեն՝ առանց գրաւելու զայն ի բռ։ Հարաւային Ամերիկայի մէջ Արժանթին Հանրապետութիւնը գրեթէ միայն իտալական ծագում ունի, եւ կը կրէ իտալական հանգամանք, թէեւ Իտալիա բնաւ պետական միջամտութիւն չունի այդ ամերիկեան Պետութեան մէջ։ Այս կերպ գաղթականութիւն սա առաւելութիւնն ունի որ քաղաքական եւ երմտական դժուարութիւններէ զերծ է։ Կարմիր ծովու ափրիկեան եզերաց վրայ Ասսապ գրուեցաւ իտալական գաղթականութիւն մը լինելու համար. բայց ի սկզբան միայն իտալացի ծովակայաններ հո՛ն պիտի աքսորուէին, եւ եթէ յետոյ առեւտրական գաղթականութիւն մ'եղաւ, պատճառն այն է որ՝ Ասսապ Իտալիոյ մօտ լինելուն համար՝ առաջին դիւրութիւնը թողուեցաւ։ Ինչ որ կը պատշաճի Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ պէս երկիրներու, որք ունին զօրաւոր արտադրութիւն մը՝ որուն նոր դաշտեր հարկաւոր են, չպատշաճիր Իտալիոյ։ Ուստի, յոյժ անհաւանական կը թուի ինձ այն ծանուցումն թէ Գերմանիա եւ Աւստրիա խոստացեր են օժանդակել Իտալիոյ գաղթային աշխարհակալութեան. ըստ որում գոյութիւն չունեցող բան մը այժմ սատարելու պէտք չունի։»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք, թէ ինչպէս Կարնոյ Առաջնորդ Գեր. Օրմանեանի վերադարձին համար այս շաբթու հրաման ելաւ Բ. Դրնէն, նոյնպէս մայրաքաղաքս գտնուող ուրիշ քանի մը առաջնորդաց վերադարձի հրաման պիտի շնորհէ մօտերս կայսերական կառավարութիւնը, և Նիկիլիոյ կաթողիկոսական խնդիրն ալ պիտի կարգադրէ ըստ խնդրանաց Պատրիարքարանի։

Մարաթիոյ առաջնորդական փոխանորդ Տ. Մաղաքիա վարդապետ Տէրունեան, որ քանիցս հրաժարագիր գրկած է առ. Կեդրոնական Վարչութիւնն, և ընդունուած չէ հրաժարականը, այս անգամ դարձեալ հրաժարած է՝ հեռագիր ուղղելով ի Պատրիարքարան, և Պոլիս ուղեւորելու հրաման խնդրելով։

Դատաստանական խորհուրդը կարող չեղաւ երէկ կանոնաւոր նիստ ընել. պատճառը յայտնի է, մեծամասնութեան բացակայութիւն։ Նորընտիր երեք անդամք իրենց ընդունած հրաւիրագրերուն պատասխանելու կ'ըսեն թէ տակաւին ժամանակ չէին ունեցած. Իսկ երէկ ներկայ եղողներն զբաղեցան մի քանի ընթացիկ գործոց կարգադրութեամբ։

Ազգային ուսուցիչներէն Մեծ. Գալուստ Էֆէնտի Գույումճեան, որ իւր ուսումնառութիւնն աւարտելու համար երեք տարիէ ի վեր Բարիզ կը գտնուէր իւր վերջին քննութիւններն յաջողութեամբ անցունելով, վկայական ստացած և մայրաքաղաքս վերադարձած է։

Յառաջիկայ կիւրակէ, 26 օգոստ. Սուրբ Աստուածածնայ տօնի և Վարդանանց վարժարանի պարգեւաբաշխութեան հանդիսին առթիւ, Կիպրոսի Նախկին առաջնորդ Գեր. Մովսէս Ծ. վարդապետ Կէօմիւշճեան Ֆէրիգիւղի Սրբոց Վարդանանց եկեղեցին Ս. Պատարագ պիտի մատուցանէ։

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
1884 Օգոստոս 25

Պարունակութիւն

Տնտեսական. — Գործակցութիւն և Գործակից Ընկերութիւնք .... Բ. Բ.
Ընկերական խնդիրներ. — Կնոջ դերը Ընկերութեան մէջ........Տ. ՆՈՒՍՈՒՖԵԱՆ
Կենսագրական. — Տի՛կին Ժորժ Սանտ......
Պատմ. Գիտութեանց.—Թուանշանք....Մ. Տ.
Վիպական.—Մատղէնի մեղքը (Բօլ Ալլան) Թարգմանութիւն.
Քաղուած Շաբաթական Լրոց.—Արտաքին, Ներքին, Ազգային,
Վէպ. — Սիմոնէ և Մարի (Կզավիէ տը Մօնթէբէն) Թարգմ. ....Մ. ՉՕԳԱՆԵԱՆ

Պայմանք բաժանորդագրութեան

Կ. Պոլիս և գաւառներու, տարեկան կէս ոսկի Օսմ.
» » վեցամսեայ քառորդ ոսկի Օսմ.
Մէկ թերթին գինն է 60 փարայ
Օտար քաղաքաց համար, տարեկան 12 Ֆր.
» » » վեցամսեայ 6 »
Թղթատարութեան ծախք, տարեկան դահեկան արծաթ 15
Վեցամսեայ » » 7 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսական հանրապետութեան նախագահն Պատուոյ Լէգէոնի Խաչի մեծ ժապաւէնն ընծայեց Կալաթա Սէրայի կայսերական Լիսէի տնօրէն Իսմայիլ Էֆէնտիի։

Քաղաքապետ Մազհար փաշա դարձեալ հիւանդացած լինելով, փորացաւէ կը նեղուի և ամիս մ'է հետէ չկրնար պաշտօնատեղին երթալ։

Կ. Պոլսոյ պապական փոխանորդ Տ. Բօթէլլիի Պրիւսէլի պապական նուիրակ անուանումն հաստատուած է։ Հռովմայ Աթոռն ծանուցած է զայս ընտրութիւն Պելճիոյ կառավարութեան որ իւր հաւանութիւնն յայտնած է։ Հետեւաբար Տ. Բօթէլլի քանի մը շաբաթէն կ'ուղեւորի իւր նոր պաշտօնատեղին. Յաջորդն որոշուած չէ տակաւին վերջնապէս։

Առեւտրական և երկրագործական պաշտօնատան մէջ նոր դիւան մ'պիտի կազմուի ընդ նախագահութեամբ Ահմէտ Էֆէնտիի, գաւառական երկրագործական ուսումնարանաց հսկողութեան (թէֆթիշ) համար։ Յատուկ պաշտօնեայներ պիտի ղրկուին գաւառները ուսումնարանները քննելու համար։ Այս պաշտօնեայք երկու կարգի պիտի բաժնուին, առաջինք 5000 և երկրորդք 3000 դրուշ ամսաթոշակաւ։ Յիշեալ դիւանին և պաշտօնատարաց իրաւասութիւնք պիտի ճշդուին մասնաւոր կանոնագրով մը, որ պետական խորհրդոյ վաւերացման ներկայացուած է։

Վառնայի առեւտրական նորընտիր գործակատար Միքէ Էֆէնտի Փէշտիմճեան իւր պաշտօնատեղին կ'ուղեւորի այսօր։

Պոլսոյ եղեռնական ատեանք, որ երկու ճիւղի բաժնուած է, ցարդ երկու միայն դատաւոր ունէր, բայց դատերու շատութեան պատճառաւ առժամեայ դատաւորներ կը կոչուէին։ Նկատելով որ այս բանս յաճախ անպատեհութեանց տեղի կուտայ, պետական խորհուրդը դատական նախարարութեան առաջարկութեամբ որոշած էր չորս միայն դատաւորներ յաւելուլ եղեռնական ատենին, կայսերական հրամանագիր մը վերջին օրերս վաւերացնելով պետական խորհրդոյ այն որոշումը, արտօնեց դատական նախարարութիւնը գործադրել զայն և վաւերացուց առաջարկեալ ընտրելիներն։

Երէկ ծանուցինք թէ հեռագրաց և թղթատարութեանց տնօրէնն ապաքինած լինելով, կրցած է պաշտօնատեղին երթալ։ Իզզէթ էֆէնտի նախ Բ. Դուռն երթալով ներքին գործոց նախարար Վսեմ. Էտհէմ փաշայի հետ տեսակցեցաւ իւր վարչութեան վերաբերեալ ամենակարեւոր խնդրոց վրայ։ Ապա հեռագրական պաշտօնատունն այցելելէ յետոյ, Սարը—Եար գնաց ուր հանգիստ պիտի վայելէ ժամանակ մը, կատարելապէս ապաքինելու համար. Ի բացակայութեան Իզզէթ էֆէնտիի, դէր—տնօրէն Հասան Ալի էֆէնտի պիտի վարէ գործերը։

Վեհ. Սուլթանն հրամայած է որ իւր անձնական գանձուն ծախսիւ նորոգուի Կէլիպօլուի Իպրահիմ Փաշայի մզկիթն՝ որ խարխուլ վիճակի մէջ է։

Պուքրէշի օսմանեան դեսպանատունն ու Կալացի օսմանեան հիւպատոսարանը շքեղ կերպիւ զարդարուեր են՝ Օգոստ. Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրն, և Ռումանիոյ նախարարք, բարձրաստիճան պաշտօնատարք, դեսպանք և այլք ի շնորհաւորութիւն եկեր են։ Գիշերն ալ լուսավառութիւն բրեր են դեսպանատունն և հիւպատոսարանը։

Կըսուի թէ Բ Դուռն այս օրերս պիտի պատասխանէ սերպիական կառավարութեան այն ծանուցագրին, որով խնդրած էր Օսմանեան պատուիրակներ կարգել որք Սերպիոյ պատուիրակաց հետ միանալով որոշեն երկաթուղեաց միացման կէտը, Վրանիայի մօտ։ Սերպիոյ ծանուցագիրն հանրօգուտ շինութեանց նախարարութեան և [illegible] ղրկուած էր։ Սպարապետի դուռն այժմ իւր պատասխանն յանձնած է յիշեալ նախարարութեան որ Բ. Դրան պիտի մատուցանէ զայն. պատուիրակք պիտի ընտրուին երկուց նախարարութեանց կողմէ։

Սկօտարայէն լուր կուտան, թէ Ջէթինէի օսմանեան դեսպան Ճէվատ փաշա յիշեալ քաղաքը գնացած է Բ. Դրան և Գարատաղի իշխանութեան միջեւ առկախ մնացեալ ինչ ինչ խնդրոց կարգադրութեան համար։

Բ. Դուռն, աւստրիական կառավարութեան առաջարկութեամբ, ծանուցագիր մ'ուղղած է մեծ տէրութեանց, անոնց ուշադրութիւնն հրաւիրելով Սուէզի ջրանցքին մէջ քարանթինա հաստատելու հարկին վրայ։ Այս տնօրինութիւն օգտակար նկատուած է, որովհետեւ Հնդկաստանի մէջ ծագած քոլերան ո՛չ միայն Եգիպտոսի այլ և համայն Թուրքիոյ բնակչաց համար մտահոգութեան առարկայ է ամեն վայրկեան։

Երէկ գրած էինք, թէ Շիշլիի կողմերն յառաջապէս գետին մը գնուեր է մօտերս բացուելիք կենդանական արուեստահանդէսին համար։ Ի վերջոյ իմացանք, թէ Գերմանիայէն խումբ մը պաշտօնակալք մայրաքաղաքս գալով՝ առեւտրական և երկրագործական պաշտօնատան մէջ պաշտօն պիտի վարեն, և խորհրդակցին յիշեալ արուեստահանդէսին պէտք եղած միջոցներուն վրայ։

Քանի մ'օր յառաջ բաւական պարագայք հրատարակուած էր ծխախոտի կեղծ պանտրոլներու երեւան ելլելուն։ Արդ՝ կը լսուի, թէ Անոխթուլը գործարանի ծխախոտի ծրարներուն վրայ տեսնուած է, զորս ծխավաճառք յանդգնաբար կը վաճառեն եղեր, և թէ Րէժիի գործակալք նախընթաց օրն այդպիսի ծրարներ հաւաքեր են ծխավաճառաց խանութներէն։

Իզմիրի պարսկական հիւպատոս Յովհաննէս էֆէնտի մայրաքաղաքս եկաւ։

Թարիֆ և Լա Թիւրքի կը հերքեն Տէրսիմի կողմերը խռովութիւն պատահած լինելուն զրոյցը, զոր եւրոպական լրագիրք հրատարակած էին՝ ռուսական Կաւկաս լրագրէն առնլով։

Ինչպէս կառավարական ուրիշ պաշտօնատունք, նոյնպէս ոստիկանութեան պաշտօնատունն այս օրերս կը սկսի հրատարակել «Վագայի Զապթիյէ» անուն թերթն, որ ժամանակաւ կը հրատարակուէր և բազում ժամանակէ հետէ խափանեալ է։

Իչիլ (Ատանայի նահանգ) [illegible] Մուքրի—զատէ Մուսթաֆա Նուրի պէյ, քանի մ'օր միայն հիւանդ պառկելէն յետոյ մեռեր է։

Իսպարթէ—Մահմուտէի Մուսաննա շոգենաւով 233 նոր զօրք մայրաքաղաքս հասան։

Ռուսճուգի և Վառնայի Աւստրիական թղթատարութիւնք փակուեր են երկուշաբթի օրէն սկսեալ, Բ. Դրան և Պուլկարիոյ իշխանութեան մէջ մօտերս հաստատեալ թղթատարական պայմանագրին համաձայն։

Կ'ըսուի, թէ Եէմէնի նահանգին պաշտօնէից մէջ փոփոխութիւններ պիտի լինին մօտերս, և Թէվֆիք փաշա Եէմէնի զինուորական հրամանատար պիտի անուանուի։

Պրուսայի գաւառական լրագիրը կը գրէ, թէ ճանապարհաց և անցից շինութեան ընդհանուր վերատեսուչ Սէլիմ Սըրրի փաշա Բիլէճիգի, Գարահիսարի և շրջակայից ճանապարհները քննելէ յետոյ պաշտօնատեղին վերադարձաւ, և պիտի հրատարակէ իւր գործողութեանց տեղեկագիրը։

Նիյտէի (Գոնիայի նահանգ) մէջ ամսոյս 8ին գիշերը, բանտարկեալք բանտը եօթն տեղէն ծակելով, պահապանաց վրայ յարձակեր, և բանտին դռները խորտակելով՝ սկսեր են փարատել ոստիկաններն և ի փախուստ աճապարել։ Տեղական կառավարութեան պաշտօնեայք լսելով՝ փութացեր են հոն և ջանացեր են յորդորանօք հանդարտեցնել չարագործները, սակայն տեսնելով, որ առաւել կը կատաղին և միաբերան կսպառնան սպանել աւերել կառավարութեան պաշտօնատուններն ու կոտորել պաշտօնեայները, հարկադրուեր են փոխադարձաբար զէնք գործածել նոցա դէմ և զսպել ու դարձեալ բանտարկել։ Այս խռովութեան ժամանակ վիրաւորուեր է չարագործաց մէկն։ Առաւօտուն վերանորոգուեր են բանտին ծակոտուած կողմերն։

Ըստ պաշտօնական տեղեկութեան, հինգշաբթի օրը Քլազոմէնի մաքրանոցին մէջ կար 24 շոգենաւ, 24 նաւ և 29 ուղեւոր։ Նոյն օրը Գաւագի առջեւ քարանթինա կըսպասէին 7 շոգենաւք, 5 առագաստանաւք և 220 ուղեւոր։

Հալքալըի և Պոլսոյ այլ ջրամբարաց նորոգութեան համար քաղաքապետական պաշտօնատան մէջ կազմեալ յանձնաժողովն մեծ փութաջանութեամբ կաշխատի։ Բայց որովհետեւ Էվգաֆի պաշտօնատան կողմէ ամեն շաբաթ յիշեալ յանձնաժողովոյ տրուելիք գումարը չվճարուիր ժամանակէ մը հետէ, այս պատճառաւ աշխատութիւնք եւս դադրած են։

Ֆրանսական բանակին այս տարուան մեծ մարզահանդէսին ներկայ գտնուելու համար կայսերական կառավարութեան կողմէ ղրկուած սպայք, Րիֆաթ և Օսման պէյերն, օգոստ. 19/31 ին Բարիզ հասեր են։

Պելկրատէն ի Նիշ սերպիական երկաթուղւոյ գծին բացումը տեղի պիտի ունենայ սեպտ. 4ին։

Ինչպէս մասնաւոր յայտարարութեամբ ծանուցուած է, Շիրքէթի թիւ 18 շոգենաւը վաղը Վոսփորի եւրոպական և ասիական գիւղերու նաւամատոյցներն հանդիպելով, Մեծ կղզի պիտի երթայ և գիշերուան ժամը 4 1/2ին պիտի վերադառնայ լուսնի լուսով։

Ուղեւորաց հանգստութեան համար ամեն կարելի միջոցներ ձեռք առնուած են. երաժշտաց ընտիր խումբ մի պիտի նուագէ երթեւդարձի ժամանակ և գեղեցիկ հրավառութիւն (ֆիշէք) պատրաստուած է, դիւրամատչելի գներով։

Տրապիզոնի գաւառին մարդահամարի գործողութիւնք աւարտելու մօտ են։ Ցարդ արձանագրեալ երկու սեռէ բնակչաց թիւն է 517,748. Այս թուոյն մէջ են նաեւ Տրապիզոնի օտարազգի բնակիչք։

Գաղթականաց յանձնաժողովը կը ծանուցանէ թէ Պրուսայի գաւառին մէջ, Պոլիվատէնէն երկու ժամ հեռաւորութեամբ Համիտիէ անուն նոր գիւղ մը հաստատուած է, ուր կան Սիլիստրէցի 52 գաղթական բնակիչք։ Օգոստ. Սուլթանն 1000 ոսմ ոսկի նուիրած է, բնակարանաց շինութիւնն աւարտելու և մզկիթ մը ու փոքր դպրոց մը կառուցանելու համար։

Քէօթահիայէն կը գրեն մեզ.

«Զրոյց կայ թէ քաղաքիս թաղապետական բժիշկ Տ. Ռիփոլթա պաշտօնանկ ըլլալով, իրեն յաջորդ կարգուած է Յոյն բժիշկ մը. թէպէտ այս լուրն Նէօլօղոս լրագրի մէջ ալ տեսնուած էր ամսոյ չափ առաջ, սակայն հաւանական է որ սոյնց չըլլայ, քանզի մինչեւ ցարդ յիշեալ բժիշկն տակաւին ժամանած չէ, բաց աստի, այժմեան բժիշկ Տ. Ռիփոլթայի պաշտօնանկութիւնը դեռ եւս ի պաշտօնէ իրեն հաղորդուած չէ՝ մինչդեռ հարկ էր ըստ օրինի։ Տ. Ռիփոլթա՝ կառավարութենէն կը պահանջէ բաւական կարեւոր գումար մը՝ որոյ մեծագոյն մասը կը կազմեն նախնական դատարանէն ունեցած պահանջքը, և թաղապետութեան վրայ անվճար մնացած ամսականները։ Իւր այս պահանջից ընդհուպ հատուցման համար մօտերս մի աղերսագիր մատոյց՝ որով իւր բազմանդամ ընտանեաց կարօտութիւնը, և ի պահանջել հարկին իւր ճամբորդութեան համար անհրաժեշտ եղած ծախուց վրայ խօսելով կառավարութեան գութն ու արդարութիւնը կը հրաւիրէր։ Տօք. Ռիփոլթա ալեւոր բժիշկ մ'է, որոյ հմտութիւնն և բազմամեայ փորձառութիւնները զինք բաւական նշանաւոր հանդիսացուցած են իւր արհեստակցաց մէջ, բաց աստի երկրիս մտաւորական ծառայութիւնները անուրանալի են. սա ամեն կերպիւ օգտակար եղած է. Քէօթահիացիք դժուար պիտի հաճին իւր պաշտօնանկութեան. անցեալները համրագիր մի կուսակալութեան մատուցին այս բժշկին իւր պաշտօնին մէջ հաստատումը խնդրելով. չգիտեմ ինչ ելք ունեցաւ սա։»

Անթապէն հետեւեալ դէպքը գրուած է մեզ.

«Անցեալ շաբաթ լսուեցաւ, թէ Մարաշու գիւղացւոց մէկուն կով մը օձէ խայթուելով, մեռնելու մօտ ըլլալով՝ անմիջապէս մորթուելով՝ քաղաքին մսավաճառաց մէկուն կը ծախուի. յորմէ միս առնողներ կերակուրներէն կը թունաւորուին, այնպէս որ 70 ի չափ մարդ կը հիւանդանան, և երեք հոգի ալ որ հում քէֆթէ կուտեն նոյն մսով, վայրապար կը մեռնին։»

Ֆար հետեւեալը կը պատմէ.

«Վերջին Թուրքօ—Ռուսական պատերազմի ժամանակ, Արեւելեան Ռումէլիի Հասքէօյ գաւառակէն 10 ամեայ թուրք աղջիկ մը իւր ծնողքը կորսուց. ռուս սպայ մը վրան գթալով, իւր քով առաւ զայն, քիչ վերջը, երբ սպայն հարկադրեցաւ մեկնիլ, աղջիկը Մարքօ անուն քրիստոնեայի մը յանձնեց, պատուիրելով որ մկրտել տայ և անունը Մարի դնէ։ Մարքօ կատարեց ռուս սպային պատուէրը և վեց տարիէ հետէ իր քովը կը պահէր աղջիկը։ Վերջերս Հասքէօյի մահմետականք իմանալով որ այդ աղջիկը՝ զոր մեռած կը կարծէին Մարքօյի տունն է և քրիստոնէական կրօնքն ընդունել տուած են անոր, տեղական կառավարութեան դիմեցին և ապացոյցներ յառաջ բերելով, աղջիկն առին յանձնեցին Քէօմիւրճի Ահմէտ էֆէնտի անուն անձի մը։ Բայց քիչ յետոյ, ընդհ. դատախազի օգնական Պ. Քոնովալօֆ Ահմէտ էֆէնտիի տունը պաշարել տուաւ և աղջիկը պահանջեց։ Ահմէտ էֆէնտի իրողութիւնն հեռագրաւ Խասքէօյի կառավարչին և Արեւելեան-Ռումէլիի կուսակալին հաղորդելով, այս վերջինէն հեռագրաւ պատասխան ստացաւ թէ պարտաւոր է աղջիկը Մարքօի յանձնել որ պիտի պահէ զայն մինչեւ 20 տարեկան հասակը, յետ որոյ ազատ պիտի թողուի ընտրել իւր ուզած կրօնքը։ Կուսակալին հրամանը գործադրուեցաւ և Մարի յանձնուեցաւ քրիստոնէին։»

Յառաջիկայ երկուշաբթիէն սկսեալ Ֆրէյսինէի ընկերութիւնը շոգենաւային կանոնաւոր երթեւեկութիւն մը պիտի հաստատէ Կ. Պոլսէն ի Կրէտէ։ Շոգենաւք պիտի մեկնին տասն և հինգ օրն միանգամ, երկուշաբթի օրերը, և պիտի հանդիպին Տարտանել, Թէնէտոս, Իզմիր, Անդրոս, Թինոս, Շիրա, Հանիա, Րեթիմօ և Քանտիա։

Ռուսական Ռոստով անուն շոգենաւը, որոյ մէջ կային 724 զօրք և Սիպերիա աքսորեալ 130 դատապարտեալք, որոց 70ն կին, նախընթաց օրը Գաւագ հասաւ և առողջապահական երկու քննիչ առնելով, մեկնեցաւ անմիջապէս ի Տարտանել, առանց ցամաքի հետ հաղորդակցելու։

Անցեալները գրած էինք թէ Իսկիւտարի մէջ Աստուածատուր անուն 123 ամեայ հայ մը, որ Սուլթան Մուրատ Բ. կայսեր ժամանակէն Թէրսանէի ծառայութեան մէջ գտնուած էր, յետոյ թշուառութեան մէջ ինկած է և հակառակ կառավարութեան հրամանաց, Իսկիւտարի թաղապետութիւնը որոշեալ նպաստը կը գլանայ ալեզարդ ծերունւոյն։ Ֆար կիմանայ թէ բարձր. Մեծ Եպարքոս իրողութիւնն իմանալով, կրկին հրաման ղրկած է, որոյ վրայ թաղապետական պաշտօնեայք ծերունին բաղնիք կը տանին, յետոյ նոր հանդերձներ տալով, կը կօկեն և փոքր խուց մը կուտան բնակելու համար։ Աստուածատուր ամեն երեկոյ հաց մը կընդունի և ամսական 30 դրուշ ու գոհ է իւր վիճակէն։

Ֆէնէրի ոստիկանութիւնը երկու օր առաջ թուրք երիտասարդ մը ձերբակալեց, որ զինուորական համազգեստ հագած, ինքզինքը թնդանօթաձիգ սպայ կը ձեւացնէր։ Այս կեղծ սպայն հարցաքննուելով յայտնեց թէ Պրուսացի էր և Իպրահիմ Էտհէմ կը կոչուէր։ Այժմ Պոլսոյ ոստիկանութեան մէջ վար դրուած է։

Քանի մ'օրէ հետէ գողութեան դէպքեր յաճախ կըպատահին Իսկիւտարու մէջ. անցեալ գիշեր գողերը Մուսթաֆա փաշայի բնակարանը մտեր են, բայց սպասաւոր մը արթնընալով ձայն հաներ և փախուցեր է զանոնք։ Իսկիւտարի գողերը գլխաւորաբար Սուլթան Թէփէ, Սուսուզ Պաղ կոչուած տեղը, խարխուլ սրճարան մ'իրենց ժամադրութեան վայր ընտրած են, ուր կը հաւաքուին եղեր։

Երէկ առաւօտ Քիոսի մէջ երկրաշարժի չորս թեթեւ ցնցումներ զգալի եղեր են։

Հինգշաբթի երեկոյ, մանկամարդ աղջիկ մը Թօփխանէի կողմը Թրանվէյի կառքին առաջ նետուեցաւ «հայտի» գոչելով։ Բարեբաղդաբար ոստիկանութեան սպայ մը, Ահմէտ էֆէնտի, փութաց օգնութեան հասնիլ և ազատել խեղճ աղջիկը որոյ մտային կարողութիւնք խանգարուած էին։

ՔՈԼԵՐԱ

Մայրաքաղաքիս առողջապահական վարչութիւնն հետեւեալ պաշտօնական տեղեկութիւններն հաղորդած է մեզ Քոլերային նկատմամբ։

Քոլէրան Իտալիա

Նափոլիի մէջ ծագած քոլերայի առաջին դէպքերը, պաշտօնական ցուցակին համեմատ, Յուլիս 26–28 էն կսկսին։ Օգոստոս 5 էն 15 տասն երկու այլ և այլ գաւառաց մէջ 126 հոգի քոլերայէ կը բռնուին և 56 կը մեռնին, ինչպէս նաեւ 5 հոգի կը մեռնին Վինթիմիլէի և Վարինեանոյի մաքրանոցաց մէջ։

Օգոստոս 15 էն 22 քոլերայէ բռնուող և մեռնող անձանց թիւը կ'աւելնայ. 266 հոգի քոլերայէ կը բռնուին և 151 հոգի կը մեռնին։

Մինչեւ այն ատեն, հիւանդութիւնը գիւղերու մէջ միայն կը ճարակի, Նափոլիի մէջ միայն մարդ մը քոլերայէ մեռնելով, ի բաց առեալ Սբէձիան, ուր նոյն շաբթուան մէջ 70 հոգի քոլերայէ կը բռնուին և 48 հոգի կը մեռնին։

Օգոստոս 24 էն 26 (օգոստոս 25 ի ցուցակն ի ձեռին չունինք) 194 հոգի քոլերայէ կը բռնուին և 193 հոգի կը մեռնին. բայց ցուցակին մէջ ի Սբէձիա քոլերայէ բռնուող և մեռնող անձանց թիւը նշանակուած չէ։ Քոլերայէ բռնուող անձանց թիւը մեռնող անձանց թուոյն կրկինը դնելով, մերձաւորագոյն հաշւով 200 թիւը պիտի ունենանք, որով օգոստ. 24–26 քոլերայէ բռնուող անձանց թիւը կը լինի 394։

Օգոստոս 26 էն 28 քոլերայէ բռնուող անձանց թիւն է 217 և մեռնող անձանց թիւը 141։ Այս թուոյն մէջ են ի Սբէձիա 58 հոգի քոլերայէ բռնուող և 38 հոգի մեռնող, և ի Նափոլի 4 հոգի քոլերայէ բռնուող և 4 հոգի մեռնող։

Օգոստոս 28 էն 30 բռնուող անձանց թիւն է 218 և 108 մեռնող, որոց մէջ են ի Սբէձիա 59 հոգի բռնուող և 25 հոգի մեռնող, և ի Նափոլի 3 հոգի բռնուող և 3 հոգի մեռնող։

Օգոստոս 30էն Սեպտեմբեր 1 բռնուող անձանց թիւն է 285 և մեռնող անձանց թիւը 155, որոց մէջ են ի Սբէձիա 64 հոգի բռնուող և 30 հոգի մեռնող։ Բայց աւելի ծանրը սա է թէ յիշեալ վերջին 24 ժամուան մէջ ի Նափոլի 72 հոգի քոլերայէ կը բռնուին և 40 հոգի կը մեռնին։ Այսպէս Նափոլի և Սբէձիա երկուքի մէջ մեռնողներուն թուոյն կէսէն աւելին իրենք կը ներկայացնեն։

Այս տեղեկութեանց համեմատ, Յուլիս 26էն Սեպտեմբեր 1, այսինքն մէկ ամսուան և քանի մ'օրուան մէջ, քոլերայէ բռնուող անձանց թիւն է 1300 և մեռնող անձանց թիւը 692։

Իտալիոյ վարակեալ նահանգները թուով 26 են.—Բանքալիէրի, Քարինեանօ, Քայրօ Մոնթէնոթթէ, Մասսա, Սալերնօ, Օնէլիա, Բարմա, Ալիսսանտրիա, Բաթթէրնօ, Սալուձձօ, Քամբոպասսօ, Պէրկամօ, Քունէօ, Ճէնովա, Բոր Մորիս, Բովի, Թուրին, Քոզէնձա, Քոմօ, Միլան, Պաւիա, Սբեցիա, Մոտենա, Թրէվիզօ, Լուքա, Րէճիօ տ'Էմիլիա։

Քաղաքաց մէջ, իրօք միայն Սբէձիա է ուր հիւանդութիւնը կը ճարակի օգոստոս ամսոյ սկիզբէն ի վեր, և Նափոլի, ուր հիւանդութիւնը յանկարծ երեւան ելաւ սաստկութեամբ մը, եւ սպառնալի երեւոյթ մը կառնու, մանաւանդ որ Իտալիոյ հարաւակողման այդ մայրաքաղաքն իւր մէջ կը պարունակէ համաճարակ հիւանդութեան մը տեղի տալիք բոլոր պայմանները։

Թուրքիոյ մէջ քոլերայի դէմ ձեռք առնուած միջոցներն են Իտալիայէն ինչպէս նաեւ Ֆրանսայէն եկող բոլոր նաւերը տասնօրեայ խիստ քարանթինայի մը ենթարկել Կլազոմենիոյ, Պէյրութի և Ափրիկեան Տրիպոլսոյ մաքրանոցներուն մէջ, և ո՛չ ուրիշ որ և է Օսմանեան նաւահանգստի մէջ, ուսկից պիտի մերժուին։ Տասնօրեայ քարանթինան

Նաւաղացոյն լինելով, կրնայ մինչեւ 15, 20 օր և նոյն իսկ աւելի երկարաձգել, եթէ Նաւուց մէջ քոլերայի դէպքեր ծագին։
Կ. Պոլիս 5 սեպտ. 1884

Նաբոլիի սամ. հիւպատոսը Սեպտեմբեր 3 Թուով կը հեռագրէ թէ վերջին 24 ժամուան մէջ ի Նաբոլի 200էն աւելի քոլերայի դէպք պատահած են։
Կ. Պոլիս 4 Սեպտ.

Քոլերան ի Ֆրանսա.

Բարիզի սամ. դեսպանն Սեպտ. 2 Թուով կը հեռագրէ արտաքին գործոց նախարարութեան թէ Սեպտ. 1ին 2 հոգի մեռած են քոլերայէ ի Թուլոն, 2 հոգի ի Մարսիլիա, Հէրօյի մէջ 8 հոգի մեռած և 4 հոգի բռնուած են, Օտի մէջ 6 հոգի և Պիրենեան լերանց մէջ 20 հոգի մեռած են։
Կ. Պոլիս 1884 Սեպտ. 4

Քոլերան ի Սպանիա.

Մատրիտի սամ. դեսպանն Սեպտ. 3 Թըւով կը հեռագրէ արտաքին գործոց նախարարութեան թէ Մատրիտի պաշտօնական լրագրոյն համեմատ՝ Ալիքանթէի նահանգին մէջ քոլերա ծագած է։ Օգոստոս 28էն ի վեր Նովէլտայի մէջ 42 հոգի բռնուած և 22 հոգի մեռած են, Ալիքանթէի մէջ 5 հոգի բռնուած և 3 հոգի մեռած, Էլչէի մէջ 6 հոգի բռնուած։
Կ. Պոլիս 1884 Սեպտ. 4

Շրջաբերական Առողջական Մէջլիսէն

Նաւահանգստաց ուղղեալ

Սպանիոյ մէջ յԱլիքանթէ քոլերա ծագած լինելով, Սեպտեմբեր երկուքէն ի վեր Ալիքանթէէն մեկնող նաւերը տասնօրեայ քարանթինայի պիտի ենթարկին Աֆրիկեան Տրիպոլիս, Պէրութի և Զմիւռնիոյ մաքրանոցաց մէջ. ուրիշ որ և է նաւահանգստի մէջ պիտի մերժուին և Ֆրանսայէն ու Իտալիայէն եկող վարակեալ շոգենաւուց կարգը պիտի դասուին։
Կ. Պոլիս, 1884 սեպտեմբեր 3

Շրջաբերական Առողջական Մէջլիսէն

Նաւահանգստաց ուղղեալ

Ի նկատ առնլով Եգիպտոսի մէջ Ֆրանսայէն և Իտալիայէն եկող շոգենաւուց վրայ դրուած քարանթինային անբաւականութիւնը, Առողջապահական Խորհուրդն որոշեց որ Եգիպտոսէն եկող շոգենաւերը հնգօրեայ քարանթինայի ենթարկին Աֆրիկեան Տրիպոլիս, Պէրութի և Զմիւռնիոյ (Քլազոմէն) մաքրանոցաց մէջ. Օսմ. ուրիշ որ և է նաւահանգստի մէջ այդ շոգենաւք պիտի մերժուին.
Կ. Պոլիս 1884 սեպտեմբեր 3

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Այս օրուան)

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՖՐԱՆԿՕ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լոնտրա, 5 սեպտ.

Հոնկ-Քոնկէն կը հեռագրեն առ Թայմզ թէ Ֆրանսական նաւատորմը վերստին ռմբակոծեր է զՔէլունկը։

ՊՈՒԼՂԱՐԻԱ

Սոֆիա, 5 սեպտ.

Պուլղարիոյ Աղեքսանդր իշխանն այսօր Վառնա ուղեւորեցաւ, ուր պիտի մնայ դրեթէ ամիս մը։

ՔՈԼԵՐԱՆ Ի ՖՐԱՆՍԱ

Մարսիլիա, 5 սեպտեմ. եր.

Այսօր 5 հոգի մեռան քոլերայէն։

Թուլոն, 4 սեպտեմ. եր.

Այսօր 1 հոգի մեռաւ քոլերայէն։

ՔՈԼԵՐԱՆ ԻՏԱԼԻԱ

Հռոմ, 5 սեպտեմ. եր.

Այսօր 50 հոգի մեռան քոլերայէ ի Նաբոլի. —վարակեալ ղանազան տեղերաց մէջ 60 հոգի։

ՔՈԼԵՐԱՆ Ի ՍՊԱՆԻԱ

Մատրիտ, 5 սեպտ. եր.

Այսօր 10 հոգի մեռան քոլերայէն յԱլիքանթէ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԴԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 25 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110 1/8
3 » » (վճռկնի)	109 3/4
3 » Բարիզի » (պանքայի)	22 95
3 » » » (վճռկնի)	23 02 1

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ	գին	9 1
Գորսային գոցուելէն վերջը	»	9 1
Այսօր Բէրայի մէջ	»	
Առաւօտուն բացուեցաւ	»	
Բարձրագոյն գին	»	9 1
Նուաղագոյն	»	9 1
Կէս օրին	»	9 1
Իւնիֆիէ Եգիպտական		66 15
Երէկ իրիկուն գոցուեցաւ		66 15
Բէրայի մէջ		—
Այս առտու բացուեցաւ		66 15
Կէս օրին		66 15
Փոխառութիւն 1863	Ֆր.	62
» 1865	»	54
» 1869	»	45
» 1873	»	41
Պօն տիւ Թրէզօր	Անգլ. Լր.	18 50
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.	44 125
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ	»	373
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»	81

ԲԱԺՆԵՏՈՄՍԻՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.	3 28
Քրէտի ժէնէրալ (Գ. Կ.)	Օսմ. Լր.	6 25
Պանք տը Գոնսա	»	5 30
Սօս. Շանժ է վալէօր	Օսմ. Լր.	3 30
Թրամուէյ	» »	295

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանկնոց	»	87 26
Անգլիական ոսկի	»	110 7
Բօլ Իմբերիալ	»	90
Քրիմից	»	51 15
Ռուբլի թղթադրամ	»	8 99
» արծաթ	»	89 30
Ֆիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարր.)	»	108 3
Վեցնոց	»	102 35
Հինգնոց	»	102 30
Մէճիտիէ	»	98
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 5 Սեպտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտ գոցուեցաւ	101
Օսմ. բացուեցաւ	8 3/16
» » գոցուեցաւ	8 1/4
Օսմ. փոխառութիւն 1865	10 1/2
» » 1869	9 1/2
» » 1871	66
» » 1872	18
» » 1873	8 3/8
Փոխառութիւն 1877	78
Պանք Օթօման	13
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	92 1/2
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	59 3/8
» առանձն. (բրիվիլէժիէ)	82 3/4
Տայրա Սանիէ	58 1/4
Տօմանիալ (փոխառ. Ռօչիլտ)	80 3/4
Հունգարական պարտաթուղթ 1877	102
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 362

Վիեննա, 5 Սեպտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 75
Օսմանեան երկաթուղի	21 10

Բարիզ, 5 Սեպտ. ժամ 3 վայր. 65 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	108 42 1/2
» » 3 0/0 բաց	78 82 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	8 25
» » գոցու. (գ. կ.)	8 30
Օսմանեան փոխառութիւն 1863	—
» » 1865	—
» » 1869	46
» » 1873	42
Օսմանեան երկաթուղի	44
» Րէժիի բաժնեթուղթք	517 50
Պանք Օթօման	576 25
Գրէտի Լիոնէ	562 50
» Ֆօնսիէ	1305
Բաժնետոմս Լիոնի (գուբ. կոր.)	1248 75
Սուէզի ջրանցք	1916 25
Իտալական 5 0/0 1877ի	97 3/4
Իտալական Ռանթ (բարձրացած)	95 99
Արեւելեան Իրաւ. (Իւնիօն Օրիան.)	—
Եգիպտական միացեալ գոց	301 25
Սպանիական (արտաքին)	60
Բրիօրիթէ Թիւրք	380
5 0/0 Հոլլանդական	357 50
Չէք Լոնտրայի վրայ	25 18

ՄԵՏԵՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Դ. ՏԱՐԱՆ Ի ԲԵՐԱ

6 Սեպտեմբեր (Ն. Տ.)

		ժ. վ.
Ծագումն արեգական (Ալաթուրքա)		5 33
Մուտք »		6 22
Կէս օր (Միջին ժամով)	11	58 6
Կէս օր (ժամ ըստ Տաճկաց)		5 24
Ծագումն Լուսնի (Ալաթուրքա)	Ե.	6 51
Մուտք »	Ա.	6 25

Երեւումն Լուսնի Ա. Ք. Սեպտեմբեր 5ին
Երեկոյեան ժամ 9.30ին

Հէրրդամէթր.

Ծանրաչափ (Ծովու երես)	754 8
Ջերմաչափ	21 8
Նուաղագոյն աստիճան	17 0
Բարձրագոյն » իրիկուան	25 [illegible]
Խոնաւութիւն 0/0	77
Բարձրութիւն անձրեւի 36 ժամու միջոցին հազարորդամէտր	0

Ուղղութիւն հողմոյ.— Հանդարտ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 5Ի ՎԻՃԱԿԸ

Ափրիկեան ծովեզերքէն եկող ծանրաչափական ճընշում մը Ալժերիայի վրայ կը տարածուի. Հիւսիսային արեւմտեան զօրաւոր հով ի հիւսիսային Միջերկրական. Հարաւային չափաւոր հով հանդարտ անձրեւով յԱլժերիա. փոփոխական յայտ տկար հով յԱրշիպեղագոս. Հիւսիսային տկար հով ի Տարտանէլ. Հարաւային տկար հով յԱթէնս։

Բարեխառնութիւնը 6 աստիճան է ի Պետերսպուրկ, 10 ի Բարիզ, 11 ի Վիեննա, 18 յԱթէնս, 27 ի Պէրութ։

Ծանրաչափական ճնշումները դէպ ի Թուրքիա կը յառաջանան, ուր գէշ օդեր հաւանական են բարեխառնութեան զգալի նուազմամբ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ»Ի

ՄԵԾ ՑՈՅՑ Ի ՆՊԱՍՏ ԻՐԼԱՆՏԱՅԻ

Պոսթըն, 16 Օգոստ. 1884

Իրլանտայի Ազգային Դաշնակցութեան ամերիկեան ճիւղին մեծ ժողովը (գոնվէնշըն) որ մօտերս գումարեցաւ Պոսթընի մէջ, երկու օր առաջ իւր նիստը վերջացուց Պոսթընի ընդարձակ շէնքերէն մէկուն մէջ որ կը կոչուի Ֆօյնէօյլ Հօլ, ուր կ'ըլլան ընդհանրապէս մեծ ժողովներ և հանդէսներ։ Նոյն երեկոյ փառաւոր ընդունելութիւն եղաւ Անգլիոյ Ազգային Ժողովոյ իրլանտացի անդամներէն Պ. Պ. Թամաս Սէքսթընի և Ուիլեամ Բ. Րէտմընտի, որք Դաշնակցութեան ժողովին ներկայ գտնուած էին։ Այս փառաւոր ընդունելութիւնը չէր պարզ ցոյց մի պատուի վերոյիշեալ անձանց, այլ յաւէտ վաւերացումն Դաշնակցութեան գործին և այն աշխարհ վարութեան՝ զոր որոշած ժողովը, միանգամայն մեծ սաւիթ մը բողոքելու ընդդէմ զրկմանց՝ որոց ենթարկուած են Իրլանտացիք իրենց հայրենեաց մէջ, և արտայայտելու անոնց փափաքը սահմանադրական ինքնավարութեան համար զոր ձեռք բերելու կ'աշխատին Իրլանտացիք ընդ առաջնորդութեամբ Մր. Չարլս Ստիուարդ Բարնէլի։ Դրեթէ ամեն դասէ և ամեն կուսակցութենէ, քաղաքական, կրօնական և ընկերական ամեն աստիճանի և երկու սեռէ, աւելի քան մի բիւր անձինք մասնակից էին հանդիսին, և ցոյցն էր արդարև ընդհանուր։

Նախ նուագածուաց մեծ խումբ մը զինուորական եղանակներ նուագեց, բայց հանդիսականք աւելի մեծ եռանդեամբ և անհամբերութեամբ կ'սպասէին լսել նշանաւոր ատենախօսներն, և անոնց ձայնակցիլ բողոքելու ընդդէմ Անգլիոյ և ի նպաստ Իրլանտայի։ Հանդէսը նկարագրելու համար Արեւելքի քանի մը էջերը չեն բաւեր. ուստի հանդիսին նկարագրութիւնը զանց ընելով, կուզեմ ատենախօսութիւններէն քաղուածներ ընել ցուցնելու համար թէ՛ նշանաւոր Ամերիկացիք և Իրլանտացիք ինչ կզգան, ինչ կը խորհին և ինչ կը խօսին Անգլիոյ դէմ։

Հանդէսը բացաւ Պատ. Մր. Մարքէնս համառօտ ատենաբանութեամբ մը՝ որոյ նշանաւորագոյն մասն է հետեւեալ քաղուածը Մր. Սիւարդ քաղաքագիտին խօսքերէն.

«Անոնք որ կը փախչին հարստահարութենէ, և անոնք որ կուգան ի խնդիր ազատութեան և այն ամեն բարիք՝ զոր ազատութիւնը կրնայ տալ, սիրալիր ընդունելութիւն կը գտնեն Ամերիկայի մէջ։ Մեք հոս, թէ՛ բնիկ Ամերիկացիքս և թէ՛ յԱմերիկա հաստատեալքս, ենք իբրև Ամերիկացիք այս շարժման մէջ, այսինքն իբրև բարեկամք ազատութեան, վասն զի Ամերիկա է երկիր ազատութեան։ Այս երկիրը զինած, կրթած, ազատութեան եռանդով վառած և դուրս ղրկած է իւր աքսորեալներն և սիրով ընդունած է զանոնք՝ որ իրեն եկած են. և ուր որ մէկն ինկած է հարստահարութեան և ազատութեան անվերջանալի կռուոյն մէջ, ինչ ցեղէ, ինչ կրօնքէ և ինչ կարգէ ալ ըլլայ..., Ամերիկա կը ճանչնայ զայնպիսին իբրև իւրը, և կողջունէ ի նմա կամ ի նոսա իւր քաջամարտիկ զինուորներն, իւր քաղաքացիներն և իւր երեսփոխանները»։

Նախագահը ներկայացուց հանդիսականաց իբրև առաջին ատենաբան Մասաչուսէց նահանգին նահանգին ընդհանուր կուսակալը Ռօպինսոն։

Կուսակալ Ռօպինսոն եռանդագին ծափահարութեամբ ընդունուեցաւ, և սկսաւ իւր ատենաբանութիւնն այսպէս.

«Հաճելի պարտք մը կը կատարեմ ի սրտէ շնորհաւորելով զձեզ այս ընդհանուր վկայութեան համար որով կը վաւերացունէք գործառնութիւններն այն կարեւոր ժողովին, որ վերջին մէկ քանի օրերուն մէջ գումարեցաւ ի Պոսթըն։ Մասաչուսէց (անուն նահանգին որոյ մայրաքաղաքն է Պոսթըն), կընծայէ լաւագոյն տեղին ուր մարդիկ կրնան գումարիլ այսպիսի նպատակի մը համար։ ... Ամեն ազգ որ կատէ զանիրաւութիւն, կը սիրէ զազատութիւն, և մարդոց աստիճանը կորոշէ ո՛չ անոնց ծնընդեան իրաւամբ, ո՛չ ընկերական կարգով և ո՛չ ցեղով, այլ հանճարով և առաքինութեամբ, որ կուտայ և կը պահպանէ հաւասար իրաւունք և արտօնութիւններ ամենուն, որ կը ճանչնայ անկապտելի իրաւունք կենաց, ազատութեան և երջանկութեան հետամուտ ըլլալու, այն ազգը միշտ կունենայ սրտագին համակրութիւն և անկեղծ բարեկամութիւն աշխարհի ամեն ժողովրդեան համար, որ իւր ձայնը կը բարձրացունէ յերկինս և կը խնդրէ ազատութիւն և հաւասարութիւն մարդկութեան համար։ Ազգի մը գոյութիւնն կամ յառաջդիմութիւնը չենք կրնար ապահով և տեւական համարիլ մինչեւ որ չքննենք ժողովրդեան բոլոր դասերուն և կարգերուն վիճակը, և չտեսնենք թէ անոնց ամենուն բարեկեցութիւնն ուշադրութեան առնուած է։ Ազգի մը տեւականութիւնը կորսուի ժողովրդեան խոնարհագոյն և աղքատագոյն դասուց բարեկեցութեամբ։ Այն դասերուն թող հող և խնամ տարուի, անոնց թող տրուին ազատութիւն և հաւասար իրաւունք, վասնզի չմնար որ բոլոր ուրիշ դասեր չունենան իրենց բուն բաժինն կառավարութեան և բախտեաց և բարեաց մէջ։ Քննելով վիճակն այն երկրին յորում կապրինք, և որոյ եւ բախտաւորած քաղաքացիքն ենք, կրնանք ըսել թէ մեր կառավարութեան ոյժը, զօրութիւնն և ապահովութիւնը հաւն յայտ որ իշխանութիւնը բաժնուած է ժողովրդեան բոլոր դասերուն մէջ։ ... Երկրին, քաղաքին և գիւղաքաղաքին ամեն հողերուն և գործերուն մէջ քաղաքացին ունի իւր մասն և բաժինը, և ուղղակի քաղաքացւոյն վրայ կիյնայ պատասխանատուութիւնը։ Ինձ կը թուի թէ մի դարման այն չարեաց ընդ որովք կը չարչարուի Իրլանտա է սա որ ժողովուրդն ունենայ իրաւունք իւր գործերն իւր ձեռօք տնօրինելու։ Տուէք Իրլանտացւոց, ինչպէս հոս տրուած է ժողովրդեան, իրաւունք կառավարելու զիրենք։ Տուէք անոնց, ինչպէս տրուած է հոս ժողովրդեան, իրաւունք դընելու օրէնքներ որ կը վերաբերին իրենց բարձրագոյն օգտին... Ինչո՞ւ Իրլանտացիք չունենան ուղղակի և շարունակ մասնակցութիւն օրէնսդրութեան մէջ, որ կը վերաբերի իրենց առտնին գործերուն... Մինչ անոնք փոյթ պիտի չունենա՞ն որ աղէկ և արդար օրէնքներ գրուին, և այն օրէնքները գործադրուին։ Ինչո՞ւ ամէն մարդ որ կը մշակէ արդիւնաւոր մի հող, եթէ ուզէ, չկրնայ ըլլալ տէր այն հողին։ Այնպէս ըրէք որ տուներ սփռին բլուրներուն վրայ և հովտաց մէջ, և այն ատեն պիտի ունենաք կարեւոր տարրեր որ կը նպաստեն այն ժողովրդեան երջանկութեանը։ Բայց կ'ըսուի թէ Իրլանտացին չգիտեր ինչպէս գործածել այսպիսի արտօնութիւններ։ Ապահո՞վ գործ է դընել Իրլանտացւոց ձեռաց մէջ իշխանութեան ծանր հզօր բազուկը։ Մինչ յարմա՞ր են անոնք ըլլալ քաղաքացիներ Իրլանտայի մէջ։ Ամերիկա կը պատասխանէ. Այո՛։ Ամերիկա գիտէ թէ իւր որդեգրեալ քաղաքացւոց մէջ Իրլանտացիք են աշխատող, հաւատարիմ և աշխոյժ, հայրենասէր քաջ և համբերող, և ունին ամէն յատկութիւն որ յարմար կ'ընէ զմարդ քաղաքացութեան։ Այն պատուական արտօնութեանց համար զոր անոնք ստացած են այս երկրիս մէջ որդեգրութեամբ, իրենց արիւնը խնայած չեն, մահուան դիմադրաւած են ի պաշտպանութիւն այս երկրին ազատութեան և ի պահպանութիւն նահանգաց միութեան... արհամարհելի և ծիծաղելի են այն առարկութիւններն որ կը յարուցուին սա կէտին վրայ թէ Իրլանտացիք յարմարութիւն չունին ինքնավարութեան։ ... Մասաչուսէցի համար կրնամ ըսել հոս թէ այս նահանգ ունի ի սրտէ համակրութիւն ամեն ջանքի որ կ'ըլլայ ի նպաստ ազատութեան։ Մասաչուսէց ներողամտութիւն չունի անիրաւութեան և ոչ հարստահարութեան համար։ Այէ՛ն չխորհիր որ և իցէ փորձութեան վրայ որ կը տանի ժողովրդեան յաջողութիւն, կը տանի ի կործանումն և ի կորուստ... Ցուցում, վէճ, պահանջում, ձգտում և փաստ յառաջ պիտի բերեն փրկում, յառաջ պիտի բերեն արդարութիւն, դուռ պիտի բանան բարւոքմանց և պիտի կարգադրեն փրկութիւն, և անկ է ձեզ և մեզ, անկ է ամենեցուն որ յԱմերիկա և այլուր կը սիրեն մարդոց իրաւունքներն, և իրենց անձերը նուիրած են անոնց, քանզի որ այս քաղաքական յուզման ազդեցութիւնն զգացուի, այնպէս որ այն քաջ մարդիկ՝ որ ազատութեան փառքին համար կը մաքառին Իրլանտայի մէջ, և որ այս մեծ յուզման առաջնորդներն են, պատուական հրաժանգ և զօրութիւն գտնեն Ովկիանոսի այս կողմէն...։»

Կը շարունակենք յաջորդ Նամակով։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԲԵՐՐԻ, ԿԵԴՐՈՆ ԶԱՐՍԱՆՃԱԳԻ

Այս գիւղաքաղաք Բէրէք կը կոչեն տեղացիք, բայց բանաւէրք անոնք երկրին արդիւնաւորութիւնն ի նկատ առնելով, սառղամանիր են ԲԵՐՐԻ, և իրաւամբ, մեզ ևս պատշաճ կ'երևի այդ անուն, զի բարեբեր է յոյժ երկրին հողը։

Բերրիի բնակչաց ճիշդ թիւն է հետեւեալն ըստ վերջին պաշտօնական վիճակագրութեան, զոր կը նշանակեմ թաղ առ թաղ։

Թաղ	Արու	Էգ
Կալերու թաղ	415	325
Կանիր աղբիւր թաղ	266	218
Եկեղեցւոյ թաղ	222	182
	903	725

Համագումար 1628 հայ, յորոց պանդուխտ են 54 անձ։

Ժողովուրդը բաժնուած է թէպէտ երեք թաղերու, բայց մի և նոյն եկեղեցի ունին Ս. Աստուածածին անուամբ։

Իսկ Թրքաց թիւն է (որ մի և նոյն թաղ ունին) արու 238, էգ 215։

Բերրիի Հայոց տարեկան տրոց քանակութիւնն է

	ղրուշ
Զինուորական (պէտէլաթ)	26096
Վաստակի տուրք (թէմէթթու)	8735 1/2
Հողային (էմլաք) 4 առ 1000	1978 1/2
« « 8 « 1000	1310
Համագումար	38120

Թրքաց տարեկան տրոց քանակութիւնն անհնար եղաւ ինձ ստուգել։ Հայոց հողային տուրքը սակաւ է, վասն զի բնակած տունէ և քանի մ'այգիէ ու պարտէզէ ի զատ հող չունին. բոլոր մշակելի հողերն աւատական սէյխերու կը պատկանին որք իրենց պարտաւոր են վճարել նոցա տուրքերը։

Զարսանճագի գաւառին (գայմագամութեան) տարեկան հասոյթն ալ հետեւեալ գումարներէ կը բաղկանայ զոր ստոյգ եմ ամենավաւերական աղբիւրէ, և զոր ստանար նշանակել աւելորդ չէ թերեւս։

	ղրուշ
Տասանորդ, արմտեաց, նուազագոյն և բարձրագոյն գումարներ	450,000—480,000
Ոչխարաց տուրք (աղնամ) նուազագոյն և բարձրագոյն գումարներ	70,000—90,000
Հողային (էմլաք), զինուորական (պէտէլաթ) վաստակի (թէմէթթու). զատ զատ որոշել դիւրին չեղաւ.	250,000—300,000
Համագումար ընդ փոքր և ընդ մեծ գումարս հասոյթից	770,000—870,000

Այս գումարներէն միայն 180,000 ղրշ. տեղական ծախուց կը գործածուի. մնացեալն ամբողջապէս կուսակալութեան կեդրոն ի Խոզաթ կը ղրկուի տարուէ տարի։

Զարսանճագի քաղաքապետական (պէլէտիյէ) սնտուկին հարուստ է գլխաւորապէս գետոց և գետակաց վրայ բանող լաստից վարձքերուն շնորհիւ, որք հետեւեալ գումարներ կուտան առ տարին. բաց ի դոցունց ուրիշ հասոյթներ ալ կան։

Ուղղակի Զարսանճագի սնտուկին պատկանեալ լաստից թիւն է 6, որք են 1 Բերրիի առջեւ, 1 Քուրէքան գիւղին մօտ, 1 Զամի մօտ, Գայլ կամ Օրոր գետակին վրայ, 1 Զօչու, 1 Կորճան գիւղին քով Մնձուր գետակին վրայ, և 1 Արաբի գիւղին մօտ Արածանիի վրայ. սոցա հասոյթն է առ տարին 13—14,000 ղրշ։

Կայ մի նշանաւոր հասութաբեր նաւակ դարձեալ Արածանիի վրայ Բերդակ գիւղաքաղաքին մօտ, որ տարին 25,000 ղրշ. վարձք կուտայ և կը պատկանի Զարսանճագի ենթակայ Բերդակ վիճակի (նահիյէ) սնտուկին։

Բայց դժբաղդաբար այսքան հասոյթներն տարուէ տարի դիզելով հանդերձ, ոչինչ օգտակար ծախուց չեն գործածուիր, մինչ առ նուազն 3—4 կամուրջ անհրաժեշտ է Զարսանճագի մէջէն հոսող այնքան ջրոց վրայ։ Գլխաւորապէս մէկ հատ Բերրիի մօտ Գայլ գետակին վրայ, որ հեռի է իրմէ մէկ քիլոմեթր միայն, և մէկ հատ ալ Բերդակի Արածանիի վրայ որ Խարբերդէն ց'Խոզաթ բանող մեծ պողոտան կը կտրէ, մինչ կառուղիներ ալ շինուած են։ Երբ շինուին այդ երկու տեղեր մէկ մէկ կամուրջ, յայնժամ ամենամեծ օգնութիւնը կ'ստանայ Զարսանճագի առեւտրական շարժումն, որ այժմ յերկին անկման մէջ է գլխաւորապէս հաղորդակցութեանց այդ դժուարութեան պատճառաւ, ըստ որում 2 հարիւրամէթր լայնութիւն ունեցող այդ գետերու վրայէն լաստով անցնելու համար երբեմն մինչեւ անգամ 3 ժամ սպասել հարկ կը լինի, թող նաև վտանգ կենաց ու ընչից որ անդէպ չէ բոլորովին. իւրաքանչիւր անցուդարձ այդ լաստերու մէջ մէկ ոտքն է մահու։

Զարսանճագի դատական հասութից գումարն 15—20 հազար ղրուշ կը լինի։

Միւս Գայլ կամ Օրոր (*) և Մնձուր գետակներ Բերրիէն 3 ժամ հեռու ընդ արեւմտեան հարաւ Թեքէֆան գիւղին մօտեր իրարու խառնուելէ զկնի, իբր 2 ժամ միասին կ'ընթանան և ապա Զամ գիւղին քովը յԱրածանի կը թափին, որ Բերդակէն անցած ատեն արդէն ընդունած է իւր յլէկալ մեծ օժանդակներն և կարող կրել մեծ նաւեր։ Այնուհետեւ Արածանի կը վազէ դէպ արեւմուտք և Կէօմիւշ-Մադէնի մօտ կը միանայ իւր մեծ եղբօր Եփրատայ, որք Թելլա մի կը կազմեն ընդ մէջ ունենալով Զարսանճագի մի մասը և Չմշկածագ գաւառակը։ Այդ Թելլան աւազան է. արեւելեան կողմն Արածանիի, արեւմտեան կողմն Եփրատայ, բայց միշտ առաջինն աւելի առատաջուր է քան զերկրորդն, թէպէտ սովորութիւն եղած է մեծ կոչել զԵփրատ արեւմտեան որ կը հոսի Կարնոյ և Երզնկայի դաշտերէն, մինչ Արածանի մեծագոյն աւազանքն են Մշոյ և Բալուայ դաշտերը։

Ջրային այս գեղեցիկ գիծէն Բերրիցիք կամ Զարսանճագցիք նախապետական գործիքներով և դուն ուրեք օգտիլ գիտեն։ Գլխաւորապէս արմտիք և բրտագործական անօթներ կը փոխադրեն լաստով մինչեւ Ակն և Մալաթիա. ամէնյան հոսանքն ի վար և նէ երթալ կարենալով, ի դարձին ցամաքային ճանապարհ կը բռնեն, որ խիստ տաժանելի է։ Բրտագործութիւնը Բերրիցւոց ամենամեծ արուեստն է, որոյ 4 գործարանք անընդհատ կը բանին, տարեկան 200 ոսկի հազիւ շահ արտադրելով։

Բարեբաղդաբար հողին արգաւանդութիւնը Զարսանճագցւոց կը հայթայթէ իրենց պէտք եղած արմտիքը ու արտածութեան իսկ կը դրկուի, եթէ ոչ ձեռարուեստական արուեստք կամ առեւտրական ձեռնարկութիւնք երբէք բաւական չէին ապրեցունել զիրենք։ Ծխախոտի բերքն ալ կը բաւէ ժողովրդեան։

Զարսանճագի բոլոր գաւառին մէջ զօրք չկայ բնաւ, այլ երկրին ապահովութիւնը յանձնուած է ոստիկանութեան միայն որ 40 հոգիէ կը բաղկանայ, յորոց բոլորն ալ Թուրք։

Վեց անուղղակի տրոց պաշտօնէութիւն մը տարին իբր 20,000 ղր. մաքսային հասոյթ կը հանէ Զարսանճագէն, իսկ խնայողական սնտուկն ի վաղուց հաստատեալ՝ ունի դրամագլուխ [illegible] 30,000 ղրշ։

Բերրիի Հայ ժողովրդեան մշտնջենաւոր խռովութեան և երկպառակութեան պատճառ է փորչախի (խարէ) և Նախադաս (պէտալէ) տանուտէր անդամակցութեան խնդիրն, զի այդ պաշտօնին հետամտութիւնն զարմանալի կերպիւ կը յուզէ այդ ժողովրդեան գլխաւորաց ուղեղը, որոյ իբր ոչ ուրեք կը տեսնուի ի Հայաստան. առաջնորդական անվերջանալի վէճերն ու կռիւներն սոյն խնդրոյ անմիջական հետեւանք են միշտ։ Ուրախալի է տեսնել մէկ կողմէ կենդանութեան նշան եղող յուզմունք ու պայքարք որք կը պակսին մեռեալ ու անզգայ հասարակութեանց մէջ, բայց Բերրիցւոց բոլորը չափազանցութիւն է, որ կը պատճառի, կարծեմ, գինւոյ չափազանց գործածութենէ, զի Բերրիցիք կ'սպառեն իրենց արտադրած բոլոր գինին որ չէ պակաս քան 120 հազար հոխա առ տարին։ Անքաղաքակրթութեան և պարտուց մէջ կործանեալ ընտանիքներն անգամ ունին իրենց այգիները որոց մեծ մասը կ'արտադրութիւնները կ'սպառեն խմելով և ոչ վաճառելով։

Բերրիցիք նախապետական կենաց սարքութիւն ունին, և ինչ ինչ սովորութիւններ յատուկ է իրենց. օրինակ, բոլոր հարսանիքները տարւոյն մէջ միայն մի օր կը կատարուին, այն է Նոյեմբեր 15ին։ Եթէ հաւորին մէկ դարտուցի այդ ընդհանրական կանոնէն, ցուցանք (անօրինակ բացառութիւն) կը համարուի. նոյնպէս կանանց հասարակ զգեստուց [illegible] լինիլն ալ ուրիշ գաւառաց բաղդատմամբ կարի տարօրինակ սովորութիւն է։

1875էն ի վեր յորմէ հետէ Հ. Միացեալ ընկերութիւնը վարժարան ունին ի Բերրի, կրթութեան զգացումն փոքր առ փոքր զարգանալ սկսած Բերրիի մէջ, և մինչեւ ցարդ այդ վարժարանէն ելած երկու ընթացաւարտ կարգերն զգալի տարբերք եղած են երկրին բարոյական զարգացման։ Անոնք դասատուութիւն կ'ընեն այլ և այլ գիւղերաց մէջ, եւ կազմած են Մատենասիրաց անուն ընկերութիւն մը որ նպատակ ունի մատենադարան մը հաստատել ի սէգս գլխաւորապէս Բերրիի վարժարանէն ելնող ընթացաւարտ աշակերտաց։ Այդ ընկերութիւն կը պատրաստէ իրեն յատուկ դրասենեակ մը իբր ընթերցարան, ջանալով ըստ ամենայնի օգտակար լինել ժողովրդեան միանգամայն։

1884 օգոստոս 4, Զարսանճագ Մ. Ն.

(*) Սոյն գետակը որ Պինկէօլէն կ'իջնէ ու Քղիէն փագելով Զարսանճագ կուգայ Մնձուրին հետ միանալու և յԱրածանի թափելու, Օրոր կամ մերթ Գայլ միանգամայն կը կոչուի հայրենի աշխարհագիրներէ, ուստի մեք ալ երկուքն միանգամայն կը գործածենք։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կատուներու քոլերա (°) — Տարօրինակ հիւանդութիւն մը, որուն մանաւանդ կատուները ենթակայ են, քանի մը տարիներէ ի վեր Հնդկաստանի մէջ երեւան կուգայ քոլերային ծագումէն առաջ և կը տեւէ մինչեւ որ սա բոլորովին անհետի։

Վարակեալ կենդանիներն հետեւեալ ախտանիշները ցոյց կուտան.

Նախ՝ ծայրագոյն թմրութեան մը մէջ կ'իյնան, յետոյ ամեն անօթը կը մերժեն. իրենց վիզը կ'ոլորեն, յաճախ կը փսխեն և իրենց բերանը փրփուրով կը լեցուի։

1883ին, Հնդկաստանի մէջ ի Շիրոս աւելի քան երեք հարիւր հազար կատու այս հիւանդութենէն մեռան. 1881ին ալ յԱհմէտնագար եօթն հարիւր յիսուն կատու նոյն հիւանդութենէն մեռան յուլիս ամսոյ առաջին երեք շաբաթներուն մէջ։

Այժմ Հնդկաստանի կառավարութիւնն, ուզելով այս երեւոյթը լուսաբանել, կը փնտռէ թէ այդ համաճարակ հիւանդութիւնը տարափոխի՞կ է մարդկային սեռին համար, և թէ տեսակ մը քոլերա չէ՞ կատուներուն անցած։

Պատուանշան ստացող կանայք ի Ֆրանսա. — Գիտէ՞ք թէ Ֆրանսայի մէջ քանի՛ կանայք Պատուոյ Լէգէոնի պատուանշան ընդունած են. — Այդ կանայք թուով 16 են և ահա սոցա իրենց անունները.

Օրիորդ Ռէժիս, Քլամսի քաղաքէն, խըռովարարաց դիմադրելուն համար (1849)։

Տիկին Ապիբօ, կին Օսալօն գաւառակին քաղաքապետին, քաղաքապետական պաշտօնատունը զինեալ մարդոց դէմ պաշտպանած լինելուն համար։

Օրիորդ Տիւսսայէ, մայրապետ (1852)։

Օրիորդ Շանէլ, Թուլուզի Կրէյ հիւանդանոցին մայրապետ (1852)։

Օրիորդ Մասէն, Գամբիէնեի Գթութեան Քերց մայրապետ (1852)։

Օրիորդ Ռանտիւ, Էն-Վէնսան-տը-Բօլի Քերց մայրապետ (1852)։

Օրիորդ Պէրթ Ռօզէ, հիւանդանոցի մը հիմնադիր ի Հավր։

Տիկին Տիւպար, Նանսիի Ցուսոյ Քերց մայրապետ։

Օրիորդ Մարի Ռօզա Պօնէօր, նկարչուհի (1865)։

Լէտի Բըկօթ, վիրաւորեալներ անձնուրաբար խնամելուն համար, ձեռամբ Թիէռի (1872)։

Քոյր Բէլէն, Թուլուզի ողողմանց ժամանակ ցոյց տուած անձնուիրութեան համար (1875)։

Տիկին Լըֆէվր, Րէն Ժօզէֆ տը Քլինիի Քերց մայրապետ, ի Մարթինիք (1875)։

Օրիորդ Ժիւլիէթ Տօտիւ։

Տիկին Ժառէյ, Շաթօտէօնի շարժուն զօրաց խոհարարուհի։

Տիկին Ֆաէ Կրօս, տնօրէնուհի Օթէլ-տը-Վիլի շարժուն հիւանդանոցին։

Տիկին Նօնա, Թուրի հիւանդանոցին կըրօնաւորուհի։

[illegible] — Ֆրանսական Կազէթ տիւ Միտի լըրագրոյն մէջ հետեւեալ հետաքրքրաշարժ տողերը կը կարդանք Սան-Րէմի քաղաքին մէջ ուղեւորները ծխման գործողութեանց ենթարկելու եղանակի մասին։

Թարասքոնի ճամբով Սան-Րէմի հասնող ուղեւորները քաղաքին առջեւ կը կենան և սպանդանոցին մէջ ծխման գործողութեանց կ'ենթարկին։ Արդ, այդ հաստատութեան պահապանն է որ այդ գործողութիւնը կը կատարէ, և ի բացակայութեան նորին, իւր աղջիկը։ Եւ որովհետեւ այս վերջինը շատ լաւ գրել չգիտեր, հայրը վերջին օրերս իրեն կ'ըսէ. «Ո՜հ, այդ չափ դժուարին բան մը չէ. սպանդանոցին կնիքներէն մին կ'առնուս, թուղթի մը վրայ կը դրոշմես, և այդ իբր վկայագիր կը ծառայէ ուղեւորայ։»

Երիտասարդ աղջիկն, կէտ առ կէտ հետեւելով իւր հօր հրահանգաց, պատահմամբ կնիք մը կ'առնու, և խողերու կնիքն է որ կը հանդիպի. այնպէս որ ուղեւորները Սան-Րէմի կը մտնեն թուղթով մը, որոյ վրայ «խոզ» բառը դրոշմուած է (՛)։

Հրեայք. — Աւստրիական կարեւոր վիճակագիր մը որ կը ցուցնէ Եւրոպայի և Թուրքիոյ մէջ գտնուող հրէից թիւը։

Ֆրանսայի մէջ կը գտնուին 60,000 հրեայ, Ալզաս-Լօրէնի մէջ՝ 50,000, Գերմանիոյ մէջ՝ 600,000, Աւստրո-Հունգարիոյ մէջ՝ 1,500,000, Ռուսիոյ և Բոլոնիոյ մէջ՝ 2,700,000, Ռումանիոյ մէջ՝ 300,000, Հոլլանտայի մէջ՝ 7,000, Անգլիոյ մէջ՝ 70,000, Իտալիոյ մէջ՝ 40,000, Տանիմարքայի մէջ՝ 5,000, Զուիցերիոյ մէջ՝ 8,000, Յունաստանի մէջ՝ 5,000, Սպանիոյ մէջ՝ 6,000, Փորթուգալի մէջ՝ 6,000 և Թուրքիոյ մէջ՝ 350,000։

ԽԻԿԱՐ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Յ. Յ. ՊԱՐՕՆԵԱՆ
— օ —
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
1884 ՅՈՒՆԻՍ
[illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցայտարարութիւն.— Խօսակցութիւն մեռելոց Ղուկիանոսի. — Ախտաբանութիւն բարոյական, Նէֆիրոն. — Ամուսնական թիւրիմացութիւնք. — Եւրոպացիներն ալ ասանկ կ'ընեն. — Ո՞վ է Կաթողիկոսն. — Այլակերպութիւն բառարանի. — Ծանուցումն. — Վրիպակ։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

ԱԶԴ

Արեւելեան Երկաթուղեաց Տնօրէնութիւնը կը ծանուցանէ հասարակութեան թէ սեպտեմբեր 7էն սկսեալ մինչեւ ցնոր տնօրինութիւն յաւելուածական կառախումբ մը (թիւ 70) ամեն կիրակի օր Պոլսէն Սան-Ստեֆանօ պիտի երթայ հետեւեալ ուղեցոյցին համեմատ։

			ժամ
Կ. Պոլսէն մեկնում		առաւօտեան	4
Քումգաբու	»	»	4,11
Եէնիգաբու	»	»	4,15
Տաւուտ-Փաշա	»	»	4,18
Սամաթիա	»	»	4,23
Եէտի-Գուլէ	»	»	4,28
Մաքրիքէօյ	»	»	4,40
Սան-Ստեֆանօյ ժամումն	»	առաւօտ	4,50

Այս կառախումբը Սան-Ստեֆանօյէն պիտի վերադառնայ ժամ 5, 40ին և Մաքրիքէօյի մէջ թիւ 3 կառախումբին պիտի միանայ մինչեւ Պոլիս։

ԸՆԴՀԱՆՈՒՐ
Կ. Պոլիս 4 սեպտ. 1884 ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	1,852,000	Անգլ. Ոսկի
Պահեստի դրամ	274,155	» »

LONDON AND LANCASHIRE

ԼՕՆՏՕՆ ԵՒ ԼԱՆԳԱՇԱՅՐ

Սոյն ընկերութիւնն չափաւոր գիներով ամեն կարգի փոխադարձ ապահովութիւնք կ'ընդունի, Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ և մօտակայ գիւղերու մէջ. գիներու և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն առ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ Ի ԹՈՒՐՔԻԱ
Բ. Ֆ. ԲԱՌԻԹ
Ղալաթիա, Հալաճեան խան 16—17
ՓՈԽ–ԳՈՐԾԱԿԱՏԱՐ
Յ. ԱՍԱՏՈՒՐ
Կ. Պոլիս, Կամուրջի գլուխ, Եէնի-ճամի 32

ԵՐԿՐՈՐԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տ. Սահակեան գիշերօթիկ և ցերեկոյ երկսեռ վարժարանին որ ի Պէշիկթաշ

Ինչպէս օգոս. ամսոյն 2/14 Թուական առաջին յայտարարութեամբ հրատարակուած էր, Տ. Սահակեան վարժարանիս արձակուրդը լրանալով, ամսոյս 15/27 չորեքշաբթի օրէն սկսեալ վարժարանս վերաբացուած և դասախօսութիւնք վերսկսած են։

Վարժարանիս ուսմանց նախկին ծրագիրն ու ընդունելութեան պայմաններն, երկու սեռէ աշակերտելոց համար միանգամայն գործադրութեան մէջ ըլլալով հանդերձ, տնօրէնութիւնս՝ ինչպէս վերջին անգամ յայտարարած էր՝ իր ստացած քաջալերութեամբ ոգեւորեալ, վարժարանիս ներկայ շրջանին մէջ աւելի վստահ դիմողութեամբ ու ճգամբք իր խնամքն յառաջ վարելու կոչուած, հետագայ յաւելումներն ըրած է ուսմանց ծրագրին վրայ. —

Ա. Արդէն բուն ծրագրին, Յունարէն և Իտալերէն լեզուներն ալ, ինչպէս և դաշնակահարութիւնն, մասնաւոր պայմաններով ուսուցանելի ըլլալով, ասոնց վրայ տնօրէնութիւնս յաւելցուցած է Լատիներէն և Գերմաներէն լեզուներն ալ, նոյնպէս մասնաւոր պայմաններով ուսուցանելի, և Հայկական երաժշտութիւն հանդերձ Եւրոպական ձայնագրութեամբ ընդհանուր աշակերտաց համար պարտաւորիչ։

Բ. Ծրագրին ուսմանց ընթացքն, երկրորդական վարժարանի յատուկ բոլոր ուսմանց համապատասխան կերպիւ ընդարձակուած է ինքնաբերաբար, և մաթեմատիքն ալ արդէն կանխաւ ծրագրին ուսմանց վրայ աւելցած ըլլալով, կը շարունակուի։

Գ. Տնօրէնութիւնս ներկայ շրջանին մէջ, ուսմանց ամեն ճիւղերուն համար, արդէն ընտրութեամբ յատկացուցած վկայեալ և ծանուցեալ ուսուցչական մարմնոյն վրայ յաւելումներ ըրած է, ուսմանց ընթացքին զարգացման համեմատութեամբ, ինչպէս անձամբ պիտի ստուգեն նոր աշակերտաց փափաքողք, զորս ընդունելու համար տնօրէնութիւնս ամեն օր ներկայ կը գտնուի վարժարանս։

Տնօրէնութիւնս իրեն նպատակ ընտրած է, մանչ տղայոց համար, ուսմանց այնպիսի զարգացում և գործնական հանգամանք մը տալ, դիւրաւ սոյն եղանակներով, որ տղայոց այն մէջ ընտրելի իրենց ասպարիզի պահանջմանց համապատասխանեն և գործունեայ անդամներ հանդիսանան ընկերական կենաց մէջ, և աղջիկ տղայոց դաստիարակութիւնք զարդու 'դեռ' և ազգային պահանջման համապատասխան կերպիւ ընձեռել իրենց։

20 օգոստ. 1884 — Հիմն. դիր.–Տնօրէն
Պէշիկթաշ — Սահակ Բ. Տ. Սահակեան

ԹԱՏՐՈՆ ԷՄԻՐԿԷՆԻ

1884 Օգոստոս 25 Շաբաթ գիշեր
ի ժամ 2½

ՏՕՆԵԼ ԵՐԵԿՈՅԹ
Ի ՆՊԱՍՏ
Ս. ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՇԻՆՈՒԹԵԱՆ
ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՊՕՅԱՃԸ–ԳԻՒՂԻ

ՕԹԷԼԼՕ

Ողբերգութիւն հինգ արարուած
ՀԵՂԻՆԱԿ ՇԵՔՍՓԻՐ

ԱՆԿՈՒՇՏ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ

Երգախառն և պարախառն կատակերգութիւն երկու արարուած

Առաջնորդութեամբ ճանաչուած երաժիշտ Միւսիւ Իոմանոյի

ՍԻՖԻԼԵՆՑ ՏՈՒՆԸ

Երկուս արարուած, անձնուէր գործակցութեամբ

ՏԵՂՒՈՅՆ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

ԻԼԱՆ

ՊԱԳԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Իբլինճի օրտույի հիւմայուն մէրյէզի իլէ մէվզիինտէ պուլունան մէզուլ իրըլմաճազ օլան ճիւլուսը ճէնապը միւլիւքեանէ մուպայէնէսի իչուն էյլէյէճէ իլան օլունուր վէ ճէհ իլէ թաշըրտան վիրիլէճէք պու ղոտայ մուգապիլինտէ չէրայիթի մուգարրէրէսի իլէ միւթարրը մուիւմ էյմէք իմաալիյէ ի հօհթէսինտէ օլուպ, իչպու աղուսթոս րումինին ինկիրմի եէտինճի րողար իրթէսի կիւնի դորոդը դաթիսի վիրիլէճէկինտէն՝ մէզաւրընըն ղոմմը իլէ իթա իխալէսի օլանլըրին լէվազիմաթը ուլումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

23 աղուսթոս 1884 2—3

ԻԼԱՆ

ՊԱԳԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Խալքի ճէպխա պագգալ քեաղըտը իքի նիւզ թօփ՝ պէհէր թօփու նիւզ օն պուչուք ղուրուշ,

Իսթանպոլ քեաղըտը՝ թօփի իչ նիւզ պէհէր թօփու թողսան պիր պուչուք ղուրուշ.

Թէք քալըպ քեաղըտը՝ թօփ նիւզ իչ՝ պէհէր թօփը օթուզ պէշ ղուրուշ.

Տաքիրէի սաքէրիյէ լիւզումու օլան Մէրքէզ իչուն նիւզ Սէրբանտ խանէ անպարընա մահֆուզ նիւմունէլէրինէ վէ չուրութի մուգարրէրէսինէ թէվֆիգան մունագասա օլունմազ իւզրէ մէվզի միւնագասայէ գօնըլման ալթա մուրտադամ իչ դոլէմ քեաղըդը ֆիյաթը մուրտադամէ ի իլէ թալէպի հօհթէսինտէ օլուպ իչպու աղուսթոս րումինին ինկիրմի տօգուզունճը չէհարշէնպիհ կիւնինէ դաթար պէհէր կիւն միւնագասատա պիլ իհրա մէզվիր կիւնտէ դարարը դաթիլի վիրիլէճէկլինտէն իթա իխալէսի օլանլարը վէ օթուզունճը րէնճիլինէ ղալպ պուլունմանլարըն մօդամը սէրաքէրի լէվազիմաթը ուլումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

23 աղուսթոս 1884 3—2

ԻԼԱՆ

ՊԱԳԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Տաիր անպարը իլէ թօփճը վէ սիւվարի ալայլարը հայվանաթը իչիւն պիր սէնէլիք օլարագ լիւզումի օլան էլլի պին ճէպխա գանթար սաման միւպայէա օլունաճագըտան իթա իխալէ թալիպ օլան, վէ չէ սիւթիւնի անթարդա իբրաթ հտայրի ինէսէլէրին աղուսթոս րումինին ինկիրմի թօղուզունճը չէհարշէնպէ կիւնինէ դաթար հէր կիւն լէվազիմաթը ուլումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

21 աղուսթոս 300 3—3

ԻԼԱՆ

ՊԱԳԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Կիրիտ Փրրդայի տապիրլէսինտէ պուլունան սաաքիրի Շահանէ մուպայէնէսի իչուն պիր նիւզ սէնէսի խյլուլինտան պիր իչ նիւզ պիր սէնէսի աղուսթոսը նիհայէթինէ դաթար չէհրիկէ լիւզումի օլան իչ պին նէտիր նիւզ էլլի դրյէմ ճէպխա բուղտայ սաթէնին չէրայիթի մուգարրէրէսի իլէ պէհէր դրյէմ ամիրի օնդրուշ օթուզ փարայա եանը պէհէր դրյէմ ճէպխանի սէքիզ դրուշ վէ պիր դրուշըն պինտէ խուս նիւզ սէքսէն ալթը ճիւզիւն օյլայա ղօյաթա օլուպ իչպու աղուսթոս րումինին ինկիրմի տօգուզունճը չէհարշէնպէ կիւնինէ դաթար հէր կիւն տէթէ վիրիլէճէկլինտէն իթա իխալէսի օլանլարըն լէվազիմաթը ուլումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

22 Աղուսթոս 1300 3—3

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ

ՇԱՀԱՆԷ

Երզրում անպարը իչին ալընաճագ մախսուսիյէ քիրիճինին իքի ղուրուշ օթուզ իչ, վէ ալա Միսր բիրինճինին թախմի պիր ղուրուշ օթուզ սէքիզ փարայա թէլիպի իւզէրինէ օլուպ, դարարը դաթիլի իչպու աղուսթոս րումինին ինկիրմի եէտինճի րողար իրթէսի կիւնի վիրիլէճէկլինտէն, թէնզիլէ թալիպ օլանլարըն մէզկիւր կիւնտէ նիհայէթ սաաթ թօդուզ պուչուղա դադար Խազինէի խասսայի Շահանէյէ կէլմէլէրի իլան օլունուր։

22 աղուսթոս 300 3—3

ՀԱՅ ԹԻՅԱՏՐՕՍԻ

Ն. Խաչատուրեան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՒ ԱՌԱՆՑ ՑԱՒԻ ԱՏԱՄՆԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Թիւ 1, Պանճէ–գափու, Կոստանդնուպոլիս

Դարուս ամենամեծ գիւտերէն մէկն է անտարակոյս ելեկտրական զօրութեան կիրառութիւնն յօգուտ մարդկային պիտոյից։ Առանց մէջ թերեւս կարեւորագոյն է այն արդիւնքն զոր կը մատուցանէ նա գործնական բժշկութեան, յորոց մի է նաեւ ատամնաբուժութեան տուած նոր և հրաշալի օժանդակութիւնն։ Այս է ելեկտրական աքցանն, ճարտարարուեստ հնարք ուրով կ'անհետանան ամեն խոչ և խութ, ցաւ կամ տագնապ որք ակռայ հանելու գործողութիւնն այնքան դժուարամերձ կ'ընէին հասարակաց։ Այսուհետեւ շնորհիւ ելեկտրական գործիքին, ակռայ հանելն դիւրամատոյց կ'ընծայուի փափկագոյն մարդոց իսկ, յորոց յական թօթափել անզգայաբար կ'ելլեն ատամունք, առանց որ և է փոքրագոյն ցաւ մը պատճառելու։ Ելեկտրական ատամնահանութիւնն դեռ հազիւ երեւցաւ յԱմերիկա, արդէն իսկ սահմանեալ է մարդկային ազգին մեծ ծառայութիւն մատուցանելու. որուն ի մասնակցութիւն կը հրաւիրէ Ս. Խաչատուրեան իւր բազմաթիւ յաճախորդքն, ինչպէս նաեւ զամեն տառապեալս ատամնախօթութեամբ։ Փորձը կրնայ ապացուցանել թէ այս նոր եղանակաւ կարելի է ոչ միայն առանց ցաւի հանել ակռայն, այլեւ ոչ նուազ սփոփանացու է, ելեկտրական զօրութեան ազդեցութեամբ առաւել եւս կը բարւոքի մնացեալ ակռաներուն առողջական վիճակն։

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլէ և Մէտիտէռանէի մէջ ուղիղ գծով շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբուս	4200	Օզիրիս	3000
Ֆարոս	4000	Նէրթիս	3000
Օսմանլի	4000	Բօրտ	3000
Սէսօստրիս	3250	Ատլանթիք	1700
Թէպէ	3250	Լոդիոս	800
Մալթայա	3250	Օլինտա	800
Մարէօթիս	3250	Սեքոլ	700

Սէտտտաքիս շոգ. Լիվըրփուլէն սատ հասաւ ընդհանուր վաճառքով։

Վերջին չեալ շոգենաւք շքեղապէս յարդարուած են ճամբորդներու համար

Դիմել առ — Ժ. Թ. ՌՈՒԹՈՒԼ և ԸՆԿ.
Գործակատար
Մէյտանճըգ փողոց, Պիլիի

Տնօրէնութիւն, Լիվըրփուլ
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սթրիթ, Լիվըրփուլ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ընդ մէջ Անդլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2,000	Լէօնարդօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մուրիլլօ	2,500
Պասսանօ	3,500	Միլօ	2,000
Պօրօտինօ	2,200	Նէրօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Գէյրօ	2,600	Օրլանտօ	3,000
Գալիբբօ	2,500	Օդրանդօ	4,500
Գամէօ	2,100	Օդդօ	2,000
Գադօ	2,000	Բասիֆիկ	1,200
Գօմօ	2,700	Բալէրմօ	3,200
Տիտօ	2,500	Բատդէր	1,700
Տօմինօ	1,800	Փիդօ	2,800
Տրալօ	2,600	Րիալթօ	4,400
Էրադօ	2,600	Րինալտօ	3,200
Ֆալքօն	800	Րօլլօ	3,000
Ֆիտօ	1,700	Րօմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Րօմէօ	3,500
Կայիլէօ	5,500	Սալէրնօ	4,000
Կիդանօ	2,200	Սարֆօ	2,000
Կօդօ	1,800	Սիլվիօ	2,000
Կրօտօ	2,200	Սօրէնդօ	4,300
Հանկօ		Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկօ	3,000	Թիկէր	1,300
Հումպէրդ	1,200	Թօլէտօ	2,800
Ճիօօ	2,300	Քոմմտօ	3,600
Քէլօօ	2,000	Ըէտտօ	3,600
Քօֆիօ	2,200	Զէպրա	1,000
Լէօ	2,000	Զէրօ	140

Թօլէտօ շոգ. նաւապետ Մոնրօ, Անգլիայէն սատ հասաւ ընդհանուր վաճառքով և իւր բեռը պարպելէ յետոյ Օտէսա պիտի ուղեւորի։

Սալէրնօ շոգենաւն ամսոյս 18ին Անգլիայէն մեկնեցաւ Զմիւռնիա, Պոլիս և Օտեսա երթալու համար և Սեպտեմբեր 4ին սատ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կընծայուի։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ — ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ
Գործակալ
Թիւ 17–18, Ֆիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

ԲԱԲԱՅԱՆՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլէ, Մէտիտէռանէի և Օտեսայի մէջ կանոնաւոր ուղեւորութեան

ՇՈԳԵՆԱՒՔ

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Պլէյ
Արաբիա	2,500	Ռօճըրս
Ալպանիա	2,500	Քրուիքշանք
Լաւոնիա	2,500	Ռուիլ
Մաքէտոնիա	3,500	Մարշ
Ռումէլիա	2,800	Ֆօթըրկիլ

Ռումէլիա շոգենաւն օգոստոս 31ին Շաբաթ օր Օտեսայէն սատ պիտի վերադառնայ։

Մաքէտոնիա շոգենաւն օգոստոս 31ին Լիվըրփուլ պիտի ուղեւորի։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ — ԴԱՆԻԷԼ, ՌԱԲՈՒ ԵՒ ԸՆԿ.
Գործակալք

ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք տեղը կանոնաւոր կը բանին Լիվըրփուլէ և Մէտիտէռանէի մէջ։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Օրանիա	7,000	Մալթա	3,000
Ատլաս	3,000	Մարոքքօ	2,500
Ալէբբօ	3,000	Նամթա	2,500
Պոդնիա	4,600	Պալմիրա	5,000
Պաթավիա	3,800	Բարթիա	3,200
Պալպէք	2,500	Բալմիրա	3,000
Պրիթիշ Քուին	1,200	Սէրվիա	7,800
Սէֆալոնիա	5,000	Սիդիա	4,600
Քադալոնիա	4,700	Սամարիա	3,000
Հերքուլանէ	2,000	Սամոքրիա	3,000
Տէմէրարա	2,500	Սիտօն	3,000
Կալլիա	4,000	Թարիֆա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500
Մարաթոն	3,000		

Սարտինիա շոգենաւը, նաւապետ Ֆէրկիւսոն Լիվըրփուլ սատ հասաւ և իւր բեռը պարպելէ յետոյ ի մօտոյ վերստին Լիվըրփուլ պիտի ուղեւորի։

Դիմել առ — ԹՈՄԱՍ Զ. ՃՈՒԼԻ
Գործակատար
Թիւ 1 Քիւչիւք Հալիլ փաշա խան Ղալաթիա

Ն. ԲԱՔԷ ԷՆԷ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մարսիլիայի և Բերայի մէջ կանոնաւոր գնացք

Տրապիզոն և Սամսոն երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լա Մէտէլ, որ Օգոստոս 13ին Մարսիլիայէն և Սեպտեմբեր 1ին երեկոյեան ժամ 5ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Տէօնէքէր երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լ'Անռուէլ։

Ուղեւորաց և ապրանքներու

Նաւուղերի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՒԹԷ ԸՂՊՈՒԼ
Մումհանէ փողոց, թիւ 141

ՖՐԷՏ, ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւոր կը բանին Լիվըրփուլէ և Աւետիքի մէջ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալճէրիան	2500	Ֆալմէնեան	3700
Ալզասեան	2500	Ֆլամինեան	3700
Անատոլեան	2500	Ֆլավեան	3700
Աթէնեան	2500	Իպէրեան	5500
Արաբեան	3700	Իլլիրեան	5500
Պավարեան	6000	Իտալեան	5500
Պուլկարեան	6000	Լէսպիան	2200
Քասթիլեան	800	Լիպուրնեան	2500
Տալմաթեան	2000	Լիպեան	800
Տօրիք	700	Օրրօթիլ	700
Էճիփթեան	3700	Պերսեան	3800
Ֆաբեան	3700	Վալենսեան	6800
Ֆալերնեան	3700	Վիքթորեան	6800

Պալտիք շոգենաւը, նաւապետ Քրիտ, ամսոյս 8ին սատ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ — ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՕՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միլլէթ խան, Ղալաթիա

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. — Լիվըրփուլ

Գործակալութիւնք
Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Զմիւռնիա, Պ. Պ. Քարվըր Եղբարք.
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վաչման և ընկ.
Մալթա, Ա. Քամփ Եղբ.
Տիրա, Ա. Մ. Մավրոկորդաթօ.
Ջիպրալթար, Պ. Ռիտօլ և ընկ.

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company
ՆՈՐԹ ՊՐԻԹԻՇ ԷՆ ՄԸՐՔԸՆԹԱՅԼ
Լոնտրայի և Էտինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.		
Հաստատեալ դրամագլուխ	3,000,000		
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,500,000		
Վճարեալ »		625,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ		1,592,235	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ		3,841,194	
			6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ		1,186,865	
Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ		551,307	
			1,738,172

NORTHERN
Assurance company
ՆՕՐԹՀԸՐՆ
Լոնտրայի և Էպէրտինի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.		
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000		
Վճարեալ »		300,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ		811,871	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ		1,778,300	
			2,890,171
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ		520,206	
Կեանքի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ		251,572	
			771,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և հասարակաց ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի գրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։

Ապահովութեանց կարգադրութիւններն կը բաշխուին երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումով, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելորդաբար ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնել, քան թէ մինչեւ ներկայ յայտնել։

Գրեթէ ամեն կարգի փոխադարձ ապահովութիւնք կ'ընդունի ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութեան ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Ստորագրեալը, շոգենաւներու և առագաստանաւերու մէջ ի վաճառ․ներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Ղալաթա, Քօմիսիօն խանի առկինը երկրորդ կամուրջ ին վրայ նայող սենեակն, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար միացեալ Ընկերութեանց
ԳԱՍՊԱՐ Յ. ՍԵԼԵՆԵԱՆ

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

1884 ՕԳՈՍՏՈՍ 11 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

Վարէն վեր երթալ ժամանակները

11 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

11 30 Պէյգօզէն Բաչաղաչէ Բ. Բաչամահալլէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ

11 30 Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ Գասըմփաշա

11 45 Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

12 — Եէնիմահալլէէն Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Պոյաճըքէօյ Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

12 15 Գավաքներէն Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Պէյգօզ Բաչաղաչէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ Գասըմփաշա

1 — Եէնիմահալլէէն Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

1 45 Եէնիմահալլէ Մէզարպ. Պէյքօզ. Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Պոյաճը. Բ. Հիսար Պէպէք Առնավուդ. Գուրուչէշմէ Օրթա. Պէշիկթաշ

2 30 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

2 — Պէյքօզ Թարապիա Պէյգօզ Բաչաղաչէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ Իսկիւտար

3 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Ֆիրէնձպուրնու Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

4 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Միրկէօն Պոյաճըքէօյ Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

4 — Պէյքօզ Պէյգօզ Բաչաղաչէ Բիֆթիքբաչամահալլէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ Պէշիկթաշ։

5 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

6 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Պէյգօզ Բաչաղաչէ Եէնիքէօյ Միրկէօն Գանլըճա Բ. և Ա. Հիսար Գանտիլլի Առնավուդքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Օրթաքէօյ Գուզկունճուգ Պէշիկթաշ Իսկիւտար

7 45 Ա. և Բ. Գավագ Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Պոյաճըքէօյ Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

8 45 Եէնիմահալլէէն Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ.

8 45 Պէյքօզ Թարապիա Պէյգօզ Բաչաղաչէ Բ. Բաչամահալլէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլքէօյ Պէյլէրպէյի Գուզկունճուգ Իսկիւտար

9 30 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Իսթինիա Պոյաճըքէօյ Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

10 15 Եէնիմահալլէ Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Պէյգօզ Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Պէպէք Առնավուդքէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ

10 45 Մէզարպուրնու Պէյքօզ. Թարապ. Պէյգօզ Բաչաղաչ. Բ. Բ. մահալլէ Գանլըճա Ա. Հիսար Գանտիլլի Վանիքէօյ Չէնկէլ. Պէյլէրպէյի Գուզկ. Իսկիւտար։

11 — Մէզարպուրնու Պէյքօզ Թարապիա Եէնիքէօյ Միրկէօն Բ. Հիսար Առնավուդքէօյ Օրթաքէօյ Պէշիկթաշ

Կամուրջէն վեր երթալ ժամանակները

12 30 Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Պոյաճըքէօյ Իսթինիա Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

1 15 Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

1 30 Գասըմփաշա Իսկիւտար Պէշիկթաշ Գուզկունճուգ Օրթաքէօյ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Առնավուդքէօյ Գանտիլլի Բ. և Ա. Հիսար Գանլըճա Միրկէօն Եէնիքէօյ Բաչաղաչէ Պէյգօզ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

2 — Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Պոյաճըքէօյ Իսթինիա Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

2 15 Իսկիւտար Գուզկունճուգ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Բ. Բաչամահալլէ Բաչաղաչէ Պէյգօզ Թարապիա Պէյքօզ

2 45 Գասըմփաշա Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Իսթինիա Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

3 30 Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Իսթինիա Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

4 15 Իսկիւտար Գուզկունճ. Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Բ. Բ. մահալլէ Բաչաղաչէ Պէյգօզ Թարապիա Պէյքօզ։

5 — Գասըմփաշա Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ Բ. և Ա. Գավագ

6 — Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

6 45 Իսկիւտար Պէշիկթաշ Գուզկունճուգ Օրթաքէօյ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Առնավուդքէօյ Գանտիլլի Բ. Հիսար Գանլըճա Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ

8 15 Պէշիկթաշ Օրթաքէօյ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպ. Եէնիմահալլէ

9 15 Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու

10 — Գասըմփաշա Գուզկունճուգ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Ա. Հիսար Գանլըճա Բաչաղաչէ Պէյգօզ Թարապիա Մէզարպուրնու Բ. և Ա. Գավագ

10 15 Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Պոյաճըքէօյ Իսթինիա Եէնիքէօյ Թարապիա Ֆիրէնձպուրնու Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

11 — Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ Պէպէք Բ. Հիսար Միրկէօն Եէնիքէօյ Թարապիա Պէյքօզ Մէզարպուրնու Եէնիմահալլէ

11 — Գուզկունճուգ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Վանիքէօյ Գանտիլլի Բ. Հիսար Գանլըճա Բ. Բաչամահալլէ Բաչաղաչէ Պէյգօզ

11 30 Պէշիկթաշ Գուզկունճուգ Օրթաքէօյ Պէյլէրպէյի Չէնկէլքէօյ Վանիքէօյ

12 — Պէշիկթաշ Օրթաքէօյ Գուրուչէշմէ Առնավուդքէօյ

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ